Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17096

368·4
U-58

368.4
Ա-57

Պրոլետարներ բոլոր յերկիրների, միացե՛ք!

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1924—1925 թ. գործնական տարվա հաշվետվություն

Հրատարակություն Անդրյերկաթուղագրամարկղի
ԹԻՖԼԻՍ—1926 թ.

2001

Пролетарии всех стран, соединяйтесь!

Деятельность

Транспортной Кассы Социального Страхнвания. рабочих и служащих Закавкасских жел. дорог (ЗАКДОРСТРАХКАССЫ).

Отчет за 1924—1925 операционный год.

Издание Закдорстрахкассы
ТИФЛИС—1926 г.

368.4
Ա-58

8850

Ա-58

Պրոլետարներ բոլոր յերկիրների, միացեք!

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1924—1925 թ. գործնական տարվա հաշվետվություն

Հրատարակություն Անդրյերկաթուղագրամարկղի
ԹԻՖԼԻՍ—1926 թ.

1008
37535

Пролетарии всех стран, соединяйтесь!

Деятельность

Транспортной Кассы Социального Страхнвания. рабочих и служащих Закавкасских жел. дорог (ЗАКДОРСТРАХКАССЫ).

Отчет за 1924—1925 операционный год.

Издание Закдорстрахкассы
ТИФЛИС—1926 г.

Գրադարան

Գլավլիտ № 548. Թիֆլիս. Տիրաժ 200.

Թիֆլիս, Ժ. Տ. Գ. Խ. Պոլիգրֆտրեստի 4-դ Տապ., Պուշկ. փ. № 3։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1/10 1924 թ. մինչեվ 1/10 1925 թ. ժամանակաշրջանում

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Անդրկովկասյան Հանրապետությունների Միության յերկաթուղային տրանսպորտի բանվորների և ծառայողների սոցիալական ապահովագրման դրամարկղը գոյություն ունի ապրիլի 10-ից 1922 թ.։

Սկզբում, յերբ նա կոչվում եր, Անդրկովկասյան յերկաթուղային բանվորների և ծառայողների սոց-ապահովագրման ժամանակավոր Բյուրո, և այդ բյուրոն աշխատում եր Սոցիալական ապահովության Կոմիսարիատի (Սոբես) ղեկավարությամբ, Անդրկովկասյան յերկաթուղու ապահովագրման դրամարկղը այդ ժամանակ սոցիալական ապահովագրման հետևյալ ձևերն եր կատարում՝ թոշակատվություն և, այսպես կոչված, լրացուցիչ նպաստների տրվումն (յերեխաների ոժիտի, նրանց կերակրման և թաղման նպաստ)։

1922 թ. աշնանից (Անդրկովկասյան յերկաթուղու բանվորների 3-րդ համագումարից հետո) Անդրկովկասյան ապահովագրման դրամարկղը արդեն սկսում է լիովին ձեվակերպվել իբրև սոցիալական ապահովագրման որգան։

Ուժեղացավ գրավոր կապը Սոցիալական Ապահովագրման Կենտրոնական Վարչության և Անդրկովկասյան կառավարող բարձրագույն ապահովագրման որգանների հետ։ 1/3—23 թվից անց եր կացվում կյանքի մեջ սոցիալական ապահովագրման բոլոր տեսակները։

Դրամարկղի աշխատանքը այդ ժամանակ մեծ դժվարություններով եր ընթանում։ Հենց նույն ժամանակն ել սոցիալական ապահովագրման գործը (կենտրոնում-Մոսկվայում) Սոցիալական Ապահովման Ժողովրդական Կոմիսարիատի ղեկավարությունից անցնում եր Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատի ղեկավարմանը, վորի շնորհիվ ապահովագրման որենսդրության մեջ ծագում եր շատ փոփոխություններ, դժվարեցնելով Անդրկովկասյան յերկաթուղային ապահովագրման դրամարկղի աշխատանքների նորմալ ընթացքը։

Այդ պատճառով Անդրկովկասյան յերկաթ. ապահովագրման դրամարկղը ստիպված եր մեծ ույժեր և ժամանակ ծախսել յուր ապպարատը հարմարեցնելու համար ապահովագրման գործի նոր պահանջներին։

Այդ ժամանակվա Դրամարկղի աշխատանքի դժվարությունների վրա,

վորոնք շարունակվում էին մինչև յերկաթուղայինների միության 4-դ համագումարը (աշնան 1923 թ.), պետք է ավելացնել նույնպես տնտեսավարների (ապահովագրողների) դեմ դրամարկղի կռիվը։ Վերջինները ապահովագրման վճարները հոժարկամ չէին մտցնում ու նրանց վրա կուտակվելով մեծ պարտքեր, ստանալը այնքան էլ հեշտ բան չէր լինում։

Բացի այդ արած ջանքերից, Անդրկովկասյան յերկաթ. ապահովագրման դրամարկղը այն ժամանակ համարյա յուր ամբողջ ույժը ու հոգսը ստիպված եր գործադրել և միջոցներ փնտրել, վորպեսզի ապահովագրման կապիտալների արժեքը ընկնելուցը փրկեր։

Բանը նրանումն է, վոր մինչև կայուն վալյուտայի մտցնումն, ապահովագրման վճարները ստացվում էին բոնաներով (անկայուն թղթե դրամանիշներով), վորոնցով Անդրկովկասյան յերկաթուղու ապահովագրման դրամարկղը ստիպված եր Բորսայում գնել չերվոնեցներ և տեղավորել վերջինները Պետական կամ Կոոպերատիվ բանկերում։

Այդ դրամական գործողությունները պետք եր շտապ կատարել, վորպեսզի, ըստ հնարավորության, քչացնել այն անխուսափելի կորուստը, վորը տեղի եր ունենում շնորհիվ թղթե դրամանիշների կուրսերին։

Թղթե դրամանիշների արժեքի անընդհատ անկումը, ինքն ըստինքյան, դրամարկղի ապահովագրական գումարները անկայուն եր դարձնում։

Սոցիալական ապահովագրումն կյանքի մեջ անցկացնելու հանդեպ գոյություն ունեցող բազմատեսակ դժվարությունների հետ միասին, կար շատ լուրջ, նույնպես մեկ դժվարություն՝ դա տնտեսավարների (ապահովագրողների), իրենց մոտ աշխատող բանվորության ապահովագրման վճարի *) պակասացման կոիվն եր։

Այդ կոիվը շարունակվեց ավելի քան 3 տարի և անցյալ, 1924—1925 գործողության տարվա վերջին, յերկաթուղային տրանսպորտի համար վորոշվեց մինչև 12% նույնիսկ 10% աշխատավարձի ապահովագրման տարիֆ։

Ամրացնելով յուր ֆինանսական հիմքը, Անդրկովկասյան յերկաթուղու Ապահովագրման Դրամարկղը անընդհատ ուժեղացնում եր յուր տեխնիկական ապպարատը; ձգտելով այդ ապպարատը այնպես հարմարացնել, վորպեսզի ամենալավ կերպով հոգա յուր ապահովագրվածների կարիքները։

Դրա հետևանքը այն յեղավ, վոր Անդրկովկասյան յերկաթուղու Ապա-

*) Համաձայն աշխատանքի Որենքների Կոդեկսի հոդ. 178, ձեռնարկությունները իրանց մոտ աշխատանքով զբաղված բանվորների ու ծառայողների համար մտցնում յեն ապահովագրման վճարներ և նրանք իրավունք չունեն այդ ծախսերը բարդել աշխատավորության վրա և վոչ էլ դուրս գալ նրանց աշխատավարձից։ Ապահովագրման վճարների չափը վորոշվում է Ժողկոմխորհի առանձին վճիռով նայած, թե այս կամ այն աշխատանքը վոր սահմանի յերկյուղալի կամ վնասակար է և վորոշվում է բանվորների ու ծառայողների աշխատավարձի հայտնի տոկոսով (10 %-ից մինչև 22 % ներկայումս)։

հովագրման Դրամարկղը մինչև յերկաթուղայինների 4-րդ համագումարը կարողացավ յուր տեխնիկական ապպարատը լիովին բարեփոխել և տալ վերջինին այն կազմվածքը, վորը ունեն Խ. Ս. Հ. Մ. տրանսպորտի բոլոր դրամարկղները։

Այսպիսով նոր տնտեսական տարվա սկզբին *) (1924 թ. 1-ը հոկտեմբերի), չնայած Անդրկովկասյան յերկաթուղու Ապահովագրման Դրամարկղի աշխատանքի ծանր պայմաններին, նրա գոյության ամբողջ ժամանակվա ընթացքում 1922 թ. ապրիլի 10-ից, վերջինը իբրև ապահովագրման որգան, հասել է յուր լրիվ զարգացման և ապահովագրման գործի բոլոր բնագավառներում ձեռք է բերել նշանավոր հաջողություններ,

Անդրկովկասյան յերկաթուղու Ապահովագրման Դրամարկղի աշխատանքը վորոշ չափով, նույն իսկ, լայնացել է։ Նրա ղեկավարության տակ է անցել բժշկական գործի նշանավոր մասը (սանատորիական-կուրորտային բժշկությունը, ցեխի բժշկությունը, ջրաբուժությունը) և աշխատավորության համար ամառային հանգստի կազմակերպությունը (հանգստատները)։

I

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԻ ԿՈՄԻՏԵՆ ՅԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՆԵՐԸ

Անդրկովկասյան յերկաթուղիների ապահովագրման որգանների կառուցվածքը

Կենտրոնական որգանը, վորը ղեկավարում է Անդրկովկասյան յերկաթուղիների սոցիալական ապահովագրման գործը, հանդիսանում է Անդրկովկասյան յերկաթուղային բանվորների և ծառայողների սոցիալական ապահովագրման Դրամարկղը («Զակդորտրախկասսա»—Անդրյերկաթսոցապդրամարկղ **)

Տեղերում (յերկաթգծերի վրա) սոցիալական ապահովագրումն կատարում յեն Անդրյերկաթսոցապ դրամարկղի բաժանմունքները

*) Տնտեսական, կամ ինչպես կոչում յեն, Բյուջետային տարին սկսվում է հոկտեմբերի 1-ից և վերջանում է նույն տոմարային տարվա հոկտեմբերի 1-ը։

**) Անդրյերկաթսոցապդրամարկղը ընդհանուր վոչինչ չի ունեցել և չունի նախկին Անդրկովկասյան յերկաթուղիների ցարական կենսաթոշակային դրամարկղի հետ, վորը Անդրկովկասի քաղաքական փոփոխությունների ժամանակ յենթարկվել է մի քանի անգամ ձևափոխման, 1921 թ. մայիսի 10-ին Վրաստանի Ս. Հ. Մ.-ի Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատի վորոշմամբ դադարեցրեց, իբրև այդպիսին, յուր գոյությունը Վրաստանի շրջաններում։ Դրամարկղի փոխարեն հիմնվեց բոլորովին նոր կազմակերպություն «Կենսաթոշակի» կամ Վրաստանի Ս. Հ. Մ. յերկաթուղիների Վարչության «Ապահովագրման Բաժին»։ Այդ կազմակերպությունը գոյություն է ունեցել մինչև 1922 թ Դրան փոխարինեց «Անդրյերկաթսոցապդրամարկղը»։

(շրջանային ապահովագրման դրամարկղները). Շրջանային ապահովագրման դրամարկղները—Ռիչտրախկասսաները «գտնվում յեն նույն տեղերում, որտեղ և Ռիչկպրոֆսոժները» և գործում յեն տրանսպորտի ապահովագրման դրամարկղների վերաբերմամբ գոյություն ունեցող կանոնադրության հիման վրա։

Յուրաքանչյուր Շրջադրամարկղ յուր գործունեությունը տարածում է այն շրջանի բոլոր բանվորների և ծառայողների վրա, որոնց վրա տարածվում է համապատասխան Ռիչպրոֆսոժի գործունեությունը։

Անդրկովկասյան յերկաթուղիների դրամարկղերը ով է վարում։

Անդրկովկասյան յերկաթուղիների դրամարկղները վարում յեն Անդրկովկասյան յերկաթուղին բանվորներից և ծառայողներից ընտրված կոմիտեները։ Այդ ընտրությունները կատարվում յեն Անդրկովկասյան ֆեդ. Հանրապետությունների յերկաթուղային Արհմիության պատգամավորների համագումարներում։

Դրամարկղի Կենտրոնական Կոմիտեն (Անդրյերկաթսոցապ դրամարկը) ընտրվում է ճանապարհային համագումարում, իսկ Շրջանային Դրամարկղների Կոմիտեները-շրջանային համագումարներում (կոնֆերենցիաներում)։ Դրամարկղների կենտրոնական և թե շրջանային (գծի) կոմիտեները ընտրվում յեն մի տարի ժամանակով։

Անդրյերկաթսոցապ դրամարկղի գործունեության սահմանները ամբողջությամբ վորոշվում յեն Զակդորպրոֆսոժի գործողության և Անդրկովկասյան յերկաթուղիների սահմաններով։

Անդրյերկաթգծիսոցապ դրամարկղի Կոմիտեն գտնվում է Թիֆլիսում, Զակդորպրոֆսոժի գտնված տեղում։ Շրջանային ապահովագրման դրամարկղների կոմիտեները գտնվում յեն Անդրկովկասյան յերկաթգծերի հետևյալ կայարաններում՝ Բաքու, Գանջա, Լենինական, Թիֆլիս, Խաշուրի, Սամտրեդի և Բաթում։

Վերաստուգիչ հանձնաժողովներ։

Անդրկովկասյան ճանապարհների բոլոր ապահովագրման դրամարկղների Կոմիտեների աշխատանքների հսկողության համար նույն համագումարներում (կոնֆերենցիաներում), վորտեղ կազմակերպվում յեն Դրամարկղների Կոմիտեները, յուրաքանչյուր տարվա համար ընտրվում են ընդհանուր միության որգաններ. Ռիչպրոֆսոժների և Դորպրոֆսոժի) և ապահովագրման դրամարկղների (Ռիչտրախկասսաների և Դորստրախկասսայի) համար վերաստուգիչ հանձնաժողովներ, վորոնք և կատարում են համապատասխան դրամարկղների Կոմիտեների գործունեության վերաքննությունը։

Ով է ընտրվել 1924 թ. յերկաթուղայինների 5-դ համագումարում Անդրյերկաթսոցապ դրամարկղի Կոմիտեյի կազմի մեջ։

Անդրկովկասյան ֆեդերացիայի յերկաթուղայինների Բաքվա 5-դ համագումարը (1924 թ. Հոկտեմբերի 10—15) վերընտրության յենթարկեց Անդրյերկաթսոցապ դրամարկղի Կոմիտեն, բաղկացած հետևյալ ընկերներից՝ Դիկ Նիկոլայ, Անանև Գեորգի և Շենդելի Իոսիֆ,

Նոր ընկերներից ընտրված Կոմիտեն, հանձին՝ Թոփչիշվիլի Գրիգորի, Դիկ Նիկոլայի և Սուրենյան Սուրենի, անցավ Անդրյերկաթսոցապի վարչության գործերի ղեկավարման 1924 թ. հոկտեմբերի 27-ին։

Ընտրված անդամները Կոմիտեյի պարտականությունները բաժանեցին իրենց մեջ հետևյալ ձևով՝ Դիկը նախագահ և հաշվի ֆինանսական բաժնի վարիչ, Թոփչիշվիլին փոխնախագահ և կազմ.—հրահ. բաժնի վարիչ, Սուրենյանը—Անդրյերկաթսոցապ դրամարկղի գործողությունների (ոպերացիոն) բաժնի վարիչ։

Անդրյերկաթսոցապ դրամարկղի Կոմիտեյի թեկնածուներ ընտրված եյին՝ ընկ. ընկ. Մարտիրոսյան Սիմոն, Արգուլյան և Սարգսիշվիլի Զախարի։

Տնտեսական տարվա մեջ (1925 թ. մայիսի մեկին) Անդրյերկաթսոցապ դրամարկղի Կոմիտեյի կազմի մեջ յեղան փոփոխություններ։

Ընկ. Թոփչիշվիլին անցավ տնտեսական աշխատանքի (տրանսպորտը)։ Նրա պարտականությունները ընդունեց իր վրա ընկ. Սուրենյանը, իսկ վերջինի տեղը բռնեց թեկնածու ընկ. Սարգսիշվիլին։

Ով ընտրվեց վերաստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ։

Դորպրոֆսոժի և Անդրյերկաթսոցապ դրամարկղի համար ընդհանուր վերաստուգիչ Հանձնաժողովի կազմի մեջ նույն 5-դ համագումարում ընտրվեցին հետևյալ ընկերները՝ Վարթանով, Զուբիև և մամեդով Մամեդ ազիզ։ Թեկնածուներ-Զիլինսկիյ և Մելքումով։

Ինչ հրահանգ ստացավ Անդրյերկաթսոցապ դրամարկղի նոր Կոմիտեն յերկաթուղայինների 5-դ համագումարից։

Անդրկովկասյան ֆեդերատիվ Հանրապետությունների Միության յերկաթուղայինների 5-դ համագումարը հիմնվելով հին Կոմիտեյի զեկույցման վրա նոր ընտրված Կոմիտեյին տվավ «բանաձև հրահանգ» Այդ «հրահանգի» մեջ Կոմիտեին հանձնարարված եր իրագործել կյանքի մեջ ճանապարհի սոցիալական ապահովագրման դրված գործի բարելավման վերաբերյալ մի շարք առաջարկություններ։

Այդ առաջարկությունները վերաբերվում եյին Անդրյերկաթսոցապ դրամարկղի գործունեության զանազան ճյուղերին՝ կազմակերպչական, ֆինանսական և բուժական։

Յեվ Դրամարկղի Կոմիտեն տնտեսական տարվա մինչև վերջը (1/10 25 թ.) կատարել է բանաձևի—«հրահանգի» համարյա բոլոր կետերը։

II

ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾՆԵՐԻ ՅԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ։

1/10—24 թ. Անդրյերկաթսոցապ դրամարկղում կար ապահովագրված 38063 մարդ (բանվորներ և ծառայողներ), վորոնցից տղամարդ—35381 և կանայք—2682։

Իսկ տնտեսական տարվա վերջին (1/10—25 թ.) ապահովագրվածների թիվը փոխվել է և արդեն հավասար է 41450 *) (տղամարդիկ—38657 և կանայք—2793) Ապահովագրվածների թվի ավելացումը կարելի է բացատրել

*) Այս թվի մեջ չեն մտնում աշխատանքի ինվալիդները, այրիները, վորբերը և գործազուրկները, վորոնց նույնպես ապահովում է Անդրյերկաթսոցապ դրամարկղը։

Անդրկովկասյան յերկաթուղիների վրա, թե շարժման ուժեղացմամբ, և թե այլ աշխատանքների ընդհանուր բարձրացմամբ։

Տղամարդկանց թիվը ավելացել է 3279 հոգով, իսկ կանանցը միայն 111։ Ինչ վերաբերվում է ապահովագրողների կազմին (թե հիմնական տրանսպորտի զանազան ձեռնարկությունների ու հիմնարկությունների և թե այլ ձեռնարկությունների, վորոնք ծառայում են տրանսպորտին կամ նրա աշխատավորներին) Անդրյերկաթսոցապդրամարկղի կասսայում 1/10—24 թ., նրանց թիվը կազմում եր՝

Պետական	Հասարակական	Մասնավոր
7	5	45

Իսկ տնտեսական տարվա վերջին (1/10—25 թ.), նրանց թիվը կազմում եր համապատասխանորեն՝

Պետական	Հասարակական	Մասնավոր
10	7	26

Մասնավոր ապահովագրողների թվի քչացումը բացատրվում է նրանով, վոր ճանապարհների Վարչությունը շատ գործեր տալիս եր զանազան աշխատանքի արտելներին ու ադելսչիկներին, իր վրա վերցնելով նրանց ապահովագրումը։

III

ԱՆԴՐՅԵՐԿԱԹՍՈՑԱՊԴՐԱՄԱՐԿՂԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Սոցիալական ապահովագրման վճարները ինչպես եյին մուծվում։

Ցացը տարիքով ապահովագրման վճարների գանձման դեպքում սոցիալական ապահովագրման բարեկեցությունը, գլխավորապես կախված է ապահովագրման վճարների լրիվ և յուր ժամանակին գանձումից ու տնտեսաբար ծախսումից։

Իրականապես ապահովագրողները անցյալ, 1924—1295 գործառնության տարին, վճարները լրիվ չեյին մացնում, վոր յերևում է հետևյալ աղյուսակից.

Վորքան մուտք պիտի լիներ Անդրյերկաթսոցապդրամարկղը 1/10—24թվից մինչև 1/10—25 թ.	Վորքան մուտք է յեղել եապես	Վորքան չի ստացվել
2.976.845 ռուբ.	2.724.355 ռ.	252.490 ռ.

Անդրյերկաթսոցապդրամարկղի խոշոր պարտատերերը։

Բացի ցույց տված պարտքից, Անդրյերկաթսոցապդրամարկղը ունի նույնպես ապահովագրման վճարների խոշոր ստանալիքներ, վորոնք, իբրև ժառանգություն, մնացել են անցյալ 1923—1924 տնտեսական տարվանից։

Այդպիսի չվճարողներից առաջինն է՝ Վրաստանի Ժողովրդական Տնտեսության Բարձրագույն Խորհրդի տեղական Տրանսպորտի Կենտրոնական Վարչությունը (ЦТМО)։ Այդ կազմակերպությունը Անդրյերկաթսոցապդրամարկղին պարտք եր 57.568 ռուբ.։ Այդ պարտքը Անդրկովկասյան իշխանությունը իջեցրել է մինչև 15.000 ռուբ., վորից մինչև որս ստացված է 5000 ռուբլի։

Յերկրորդն է՝ «Правление грузчиков» (բեռնակիրների Վարչությունը), վորը Անդրյերկաթսոցապդրամարկղին պարտ է 7.616 ռուբլի։

Ապահովագրողների ընդհանուր պարտքերի Անդրյերկաթսոցապդրամարկղին 1/10—25 թ.։

Ապահովագրողների ընդհանուր պարտքը 1923—24 թ. Անդրյերկաթսոցապդրամարկղին կազմում է	98 087 ռ.
Տուգանք այդ պարտքի համար	3.724 ռ.
Չստացված ապահով. վճարների գումարը 1/10—25 թ.	252.490 ռ.
Ընդ.	354,301 ռ.

Այսպիսով 1/10—1925 թվին Անդրյերկաթսոցապդրամարկղին ապահովագրողները պարտք են 354.301 ռուբլի։ Այդ պարտքի մեծ մասը, այսինքն՝ 275.366 ռ., ընկնում է Անդրկովկասյան Յերկաթուղիների Վարչության վրա։

Այդպիսի խոշոր պարտքերի դիմաց Անդրյերկաթսոցապդրամարկղը, բնական է, չի կարող անտարբեր մնալ։ Այդ պարտքերը ստանալու համար Անդրկյերկաթսոցապդրամարկղը համապատասխան միջոցներ է ձեռնարկել *)։

Ինչ ծախսեր է արել Անդրյերկաթսոցապդրամարկղը 1924—1925 տնտեսական տարում։

Բոլոր ստացած և Անդրյերկաթսոցապդրամարկղի տրամադրության տակ յեղած միջոցները ծախսվում եյին տնտեսաբար և խստորեն, հաժաձայն իրենց նշանակության, օրենսդրական կարգով, բացառությամբ ամբողջ ապահովագրական վճարների 10-րդ մասի, վորը փոխադրվում եր, այսպես կոչված, պահեստի ապահովագրման ֆոնդը և անցնում է Սոցիալական ապահովագրման Կենտրոնական Վարչության տրամադրության տակ։

Անդրյերկաթսոցապդրամարկղը յուր ապահովագրական միջոցները ծախսում եր այսպես՝

1) Նպաստների տրվումն ժամանակավոր աշխատանքի ընդունակությունը կորցնողներին, շնորհիվ հիվանդության, հղիության (աշխատավորուհիներին) ընտանիքի հիվանդ անդամի խնամքի կամ կարանտինի դեպքերում։

2) Կենսաթոշակի վճարում աշխատանքի անկյալներին (ինվալիդներին), այրիներին և վորբերին։

3) Ապահովումն գործադուրկների։

4) Վճարումն լրացուցիչ նպաստների (յերեխի ոժիտ, նորածինների կերակրման և թաղման)։

*) Պարտքերի դեմ կռվելու գործի մեջ մասնակցություն ունին Դորպրոֆսոժը և ճանապարհի աշխատանքի ինսպեկցիան, մանավանդ վերջինը, վորի վրա դրված է հսկելու պարտականությունը, վորպեսզի յուր ժամանակին մացնեն ապահովագրողները ապահովագրական վճարները։

5) Ապահովագրվածների բժշկական ոգնության բարելավումը։
6) Սանատորիական և կուրորտային ոգնության ծախսեր։
7) Հանգստի տների վրա ծախսեր։
8) Կազմակերպչական-տնտեսական ծախսեր և այլն։

Յեթե Դրամարկղի անցյալ տնտեսական տարվա կատարած ծախսերը նշանակել 100% թվով, այն ժամանակ այդ գումարից 28%-ը ընկնում է ժամանակավոր աշխատանքի ընդունակությունը կորցնողների վրա, թոշակների—14%, գործազուրկների—մոտ 1%, սանատորիաների և կուրորտների—7%, բժշկական ոգնության—28%, լրացուցիչ նպաստների—12%, հանգստի տների—6% և տնտեսական կազմակերպչական կարիքների—4%։

Բավականացել են արդյոք Անդրյերկաթսոցապդրամարկղի ստացված գումարները սոցապահովագրական մատուցած ծախսերի համար։

Ներկայումս տրանսպորտի համար գոյություն ունեցող ապահովագրական իջեցրած տարիֆը (միջին թվով աշխատավարձի 12%) չի ծածկում տրանսպորտնիկների սոցիալական ապահովագրման նպատակի համար բոլոր անհրաժեշտ ծախսերը։

Իսկ բարձրացնել տարիֆը, վորպեսզի Դրամարկղը կարողանա առանց պարտքերի գոյությունը պաշտպանել, առայժմ դեռ հնարավորություն չկա։

Բնական է, ապագայում, յերբ մեր պետական տնտեսությունը ավելի կամրանա, այն ժամանակ հնարավոր կլինի բոլոր ընտեսությունների և ձեռնարկությունների համար նշանակել անհրաժեշտ և համապատասխան ապահովագրական վճարների չափ (տարիֆ)։

Սովորաբար Անդրյերկաթսոցապդրամարկղի դրամները չեր բավականանում սոցիալական ապահովագրման նպատակով ծածկել բոլոր ծախսերը և դրամարկղը ստիպված եր դրամական ոգնության (դոտացիայի) դիմել Սոցիալական ապահովագրման Կենտրոնական Վարչությանը (Մոսկվա)։

Վերջինը վերտեղից և ոգնության դրամներ վերցնում դրամարկղների, մանավանդ, տրանսպորտի Ապահովագրման դրամարկղների դեֆիցիտը ծածկելու նպատակով։

Բանը նրանումն է, վոր թե պետական և թե, ընդհանրապես, բոլոր ձեռնարկությունները ապահովագրական վճարները հավասար տոկոսներով չեն մտցնում։ Կան և այնպիսիները, վորոնց համար նշանակված և ավելի բարձր տոկոս։

Շնորհիվ դրան մի քանի ապահովագրման (մանավանդ տերրիտորյալ) դրամարկղները ունենում են միջոցների ավելացումներ։ Իսկ վորովհետև բոլոր ապահովագրական մուտքերի հաշվառումը (հաշվելով և պահեստի ֆոնդում գոյացած ավելցումները) կենտրոնացած է Սոցիալական Ապահովագրման Կենտր. Վարչության դրամարկղում (Ցուսստրախ), այդ պատճառով վերջինը, հնարավորություն ունի, անհրաժեշտ դեպքում, դրամներ տեղափոխել պետական բանկի միջոցով այն Դրամարկղին, վորը ոգնության կարիքի մեջ է։

Ներքևում բերած աղյուսակը ցույց է տալիս, թե Անդրյերկաթսոցապդրամարկղը ինչ չափով ընթացիկ տնտեսական տարվա մեջ կենտրոնից նյութական ոժանդակության (դոտացիայի) կարիք է ունեցել։

Վորքան է ծախսել Անդրյերկաթսոցապդրամարկղը 1924—1925 տնտեսական տարում	Վորքան է յեղել Դրամարկղի մուտքը նույն տարվա գործողությունների համար	Վորքան է պակասել գործողությունների ծախսերը լրացնելու համար
2.942.969 ռուբ.*)	2.732.063 ռուբ.**)	210.906 ռուբլի

Շնորհիվ դրամարկղի այդպիսի դրության, Անդրյերկաթսոցապդրամկոմիտեն հնարավորությունից զուրկ եր ընթացիկ տարվա մեջ սոց. ապահովագրման պահեստի ֆոնդը մտցնել 181.287 ռուբ. ավելացում, բուժական պահեստի ֆոնդը—90.515 ռուբ., կազմակերպչական-տնտեսական ծախսերի ֆոնդը—30 990 ռուբ. և վճարել Անդրկովկասյան յերկաթուղիների Առաջին յուր 4.621 ռուբլի պարտքը, վոր մնացել եր նախանցյալ 1923—1924 տնտեսական տարվանից։

Յեթե հաշվի առնել և այդ վերջի թվերը, այն ժամանակ անցյալ տընտեսական տարին Անդրյերկաթսոցապդրամարկղը ընդհանուր առմամբ 518.319 ռուբլու դոտացիայի կարիք ուներ։

Անդրյերկաթսոցապդրամկոմիտեյի դրամարկղի դրությունը 1 հոկտեմբեր 1925 թ.

Յուր դեֆիցիտը ծածկելու համար Անդրյերկաթսոցապդրամարկղը ստացել է կենտրոնից նույն տարին 358.086 ռուբ. ոգնություն (վորից կանխիկ 170.000 ռուբ. և 181.086 ռուբլի էլ դուրս գրված սոց. ապահովագրման պահեստի ֆոնդի հաշվից, վորը պետք է տեղափոխվեր կենտրոն)։

Այդ դոտացիան այնուամենայնիվ Անդրյերկաթսոցապդրամարկղի բոլոր դեֆիցիտը չծածկեց և, լրացնելու համար, նա ստիպված եր սանատորիումի շինության ֆոնդից փոխարինել 160.233 ռուբլի։

Դեֆիցիտ	Դոտացիա	Դեֆիցիտի չծածկված մասը
518.319 ռուբ.	358.086 ռուբ.	160.233 ռուբ.

Այսպիսով առ մեկն հոկտեմբերի 1925 թ. Անդրյերկաթսոցապդրամարկղը կանխիկ փողեր չուներ։ Ապահովագրողների այդ ժամանակվա պարտքը դրա-

*) Այս ծախսերի մեջ մտած են 110.000 ռուբ., վոր փոխադրել է Անդրյերկաթսոցապդրամարկղը սանատորիումի շինության ֆոնդը, վորտեղից առաջվանից փոխադրված եր այդ գումարը։

**) Դրա մեջ է և անցյալի մնացորդը։

մարկղին կազմում եր 354.301 ռ., իսկ չհաշված (42.568) անհույս պարտքը ընդամենը 311.733 ռ.։

Բայց և այդ 311.733 ռ. պարտքի հատուցումը հնարավորություն չեր տալ Դրամարկղին գոյությունը պաշտպանել թեկուզ 1925 թ. հոկտեմբերին, վորովհետև անցյալ տարվա դեֆիցիտը (311.733 ռ.—160.233 ռ.) ծածկելով, Անդրյերկաթսոցապդրամարկղի մոտ հոկտեմբերի ծախսերի համար կը մնար միմիայն 151.500 ռ.։

Մինչդեռ Դրամարկղի ամսական ծախսը, միջին թվով, կազմում և 250.000 ռուբ., իսկ հոկտեմբեր ամսվա համար ապահովագրական վճարների մուծումը սպասվում եր միայն նոյեմբեր ամսին։

Այս պատճառով, յերբ գոյություն ունի ապահովագրական վճարների ցածր տարիքը, Անդրյերկաթսոցապդրամարկղի ընթացիկ ծախսերի համար վորևե դրամական պաշար ունենալու մասին, խոսք չի կարող լինել։

Անդրյերկաթսոցապդրամարկղը այդ պատճառով վորոշ կերպով մնում և իբրև դեֆիցիտային կասսա, վորը մշտական կարիք ունի դրամական ոժանդակության։

IV

ԱՆԴՐՅԵՐԿԱԹՍՈՑԱՊԴՐԱՄԱՐԿՂԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նպաստներ ժամանակավոր անաշխատունակներին

Խորհրդային միության մեջ սոցիալական ապահովագրման բոլոր ձևերից ամենաուժեղ կերպով զարգացել և ժամանակավորապես աշխատանքի ընդունակությունը կորցնողների ապահովումն, վորը ներկայումս առաջնակարգ տեղ և գրավում ամբողջ աշխարհում։

Ըստ մեր որենսդրության, ժամանակավոր աշխատանքի ընդունակության կորուստը, վոր հետևանք և լինում հիվանդության, դրամարկղը այդ որերի համար նպաստներ տալիս և անխտիր բոլոր վարձու աշխատավորներին, անկախ նրանից, թե ինչն և յեղել աշխատանքի ընդունակության կորուստի պատճառը (հիվանդություն, հաշմանդամություն, հղիություն կարանտին կամ ընտանիքի հիվանդ անդամին խնամքը)։

Նպաստները նման դեպքում մեզ մոտ տրվում են իսկական աշխատավարձի չափով, այսինքն այնքան, վորքան վոր աշխատավորը ստանում եր հիվանդությունից առաջ։

Այդ նպաստները (փաստացի աշխատավարձի քանակով) տրվում են բժշկի վկայականով, աշխատանքի ընդունակության կորուստի առաջի որվանից մինչև նրա վերականգնումը, կամ մինչև ինվալիդության վորոշումը։

Ժամանակավոր աշխատանքի ընդունակությունը հղիության կամ ծննդաբերության պատճառով կորցնելու համար, նպաստներ տրվում են ֆիզիկական աշխատանքով զբաղվող կին աշխատավորներին 8 շաբթվա ընթացքում մինչև ծննդաբերությունը և 8 շաբաթ ծննդաբերությունից հետո, իսկ մնացած վարձու աշխատավոր կանանց 6 շաբաթ մինչև և 6 շաբաթ ծննդաբերությունից հետո։

Յեթե ապահովագրվածը կարանտին և ընկնում, այսինք, յեթե նրա ընտանիքի վորևե անդամը վարակիչ հիվանդ և, բժիշկները նրան աշխատանքի չթողնեն, վորպեսզի նա չտարածի վարակը, նա այդ բացակա որերի համար ել նույնպես ստանում և նպաստ յուր լիովին աշխատավարձի քանակով, իսկ ընտանիքի հիվանդ անդամին խնամելու դեպքում, միայն այն ժամանակամիջոցի համար, վորը անհրաժեշտ և մինչև վոր հիվանդին տեղավորել հիվանդանոց կամ բերել տալ խնամողին (հիվանդին խնամելու գործի կազմակերպումը)։

Ներքևի աղյուսակից յերևում և, թե Անդրյերկաթսոցապդրամարկղը ամեն ամիս յուրաքանչյուր 100 ապահովագրվածներին վորքան հիվանդական որեր և վճարել։

Տարի։	1924 թ.			1925 թ.								
Ամսում։	X	XI	XII	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Վճարած հիվանդական որերի թիվը։	93.	67.	72.	66.	73.	78.	69.	56.	85.	110	101	10
Վճարած հիվանդական որերի թիվը, հաշված մինչև ծննդաբերության և ծննդաբերությունից հետո արձակուրդները։	94.	69.	75.	68.	75.	80.	71.	69.	86.	112	104	10.

Այս աղյուսակից յերևում և, վոր մինչև ծննդաբերության և ծննդաբերությունից հետո արձակուրդները նշանավոր չափով բարձրացնում են ժամանակավոր աշխատանքի ընդունակության կորստի վճարած որերի ընդհանուր թիվը։

Բացի դրանից, հիվանդական որերի քանակի շատացման վրա ազդում են ուժեղ կերպով հիվանդության պատճառով և սանատորիական-կուրորտային բժշկության նպատակով արձակուրդները, վոր նկատվում և մանավանդ ամառ ժամանակ։

Միջին թվով, Անդրկովկասյան յերկաթուղիների վրա, յուրաքանչյուր 100*) ապահովագրվածներին ընկնում և ամիսը մոտ 82 (հիվանդության պատճառով արձակուրդի որեր, կամ տարվա մեջ մոտ 10 հիվանդական որեր) չհաշված ծննդաբերությունից առաջ և հետո արձակուրդները) յուրաքանչյուր ապահովագրվածի վրա։

*) 100 ապահովագրվածների վրա 82 արձակուրդի որերից 76 որը ընկնում և ընդհանուր հիվանդության վրա, կարանտինի և ընտանիքի հիվանդ անդամի խնամքի վրա $^1/_2$ որ, հաշմանդամության պատճառով հիվանդացողների 5 $^1/_2$ որ։

Վորքան է ծախսել Անդրյերկաթսոցապդրամարկղը 1924—1925 թ. ժամանակավոր անաշխատունակների ապահովելու համար:

Ժամանակավոր աշխատանքի ընդունակությունը կորցրածների ապահովման համար կին աշխատավորների հղիության և ծննդաբերության նպատակով կորցրած օրերի հետ միասին, Անդրյերկաթսոցապդրամարկղը անցյալ 1924—1925 թ. տնտեսական տարին ծախսել է 777,190 ռուբ. 20 կոպ. վոր կազմում է Դրամարկղի բոլոր ծախսերի համարյա 28%-ը:

Այդ ժամանակամիջոցում վճարված արձակուրդի օրերի թիվը կազմում է 383,171 իսկ յուրաքանչյուր օրվա վճար յերկու ռուբլուց քիչ ավել:

V

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԲԱՇԽՈՒՄՆ

Կենսաթոշակավորների (պենսիոներների) ապահովումն

Մինչև 1924 թ. սկիզբը ինվալիդության ապահովագրումն շատ հետ եր մնացել յուր զարգացման մեջ, քան մնացած սոցիալական ապահովագրման այլ ձևերը:

Համաձայն այն ժամանակվա կանոններին, բոլոր ինվալիդները առանց հաշվի առնելու, թե ինչ պատճառից է առաջացել նրանց աշխատանքի ընդունակության կորուստը, բաժանվում եյին 6 խմբի, վորոնցից ապահովման իրավունքով ոգտվում եյին միայն առաջի յերեք խումբը*) թոշակների նորմաները ինքն ըստ ինքյան ցածր եյին:

1-ի խմբի ինվալիդների թոշակի քանակը մեզ մոտ այն ժամանակ միջին թվով 7 ռ. 50 կ. եր, յերկրորդ խմբինը—5 ռ. և յերրորդ խմբինը 3. ռ. 75 կ.:

Ընտանիքի կերակրողի մահվանից հետո, նրա ընտանիքին տրվում եր այն ժամանակ թոշակ 5 ռ., յեթե բաղկացած է 3 և ավել աշխատանքի վոչ ընդունակ անդամներից, իսկ յեթե բաղկացած է յերկու անդամից—տրվում եր 3 ռ. 75 կ., մեկ անդամից—տրվում եր 2 50 կ.:

Ապահովման այդ չնչին գումարն եր պատճառը, վոր ձեռնարկությունների պահվում եյին այդ կիսաինվալիդները և շնորհիվ դրան վնասվում եր արդյունաբերությունը:

Պետական ֆինանսների ամրացումը և աշխատանքի արտադրության բարձրացումը ոգնեցին ինվալիդներին գոյություն ունեցող ապահովման պայմանները փոխել:

Յեվ այդ փոփոխությունը յեղավ:

Ընդհանուր ինվալիդության թոշակների նշանավոր բարձրացումը յեղավ 1924—1925 տնտեսական տարվա միջին, յերբ որենք հրատարակվեց, վորով առաջարկվեց թոշակը հաշվել տվյալ վայրի միջին աշխատավարձի քանակից յելնելով և միջին աշխատավարձի քանակը վերաստուգման յենթարկել յուրաքանչյուր յերեք ամիսը:

Այս որենքով առաջին խմբի աշխատանքի ինվալիդին տրվում եր տվյալ վայրի միջին ամսական աշխատավարձի 50 %-ի չափով թոշակ և համապատասխանորեն քչացնվում եր ուրիշ խմբերի ինվալիդներին և վորբ մնացած ընտանիքի անդամներին:

Բացի այդ, դեռ 1924 թ. ապրիլի մեկից ընդհանուր աշխատանքի ինվալիդների թվից առանձնացած են այնպիսիները, վորոնք աշխատանքի ընդունակությունը կորցրել յեն պրոֆեսիոնալ հաշմանդամության շնորհիվ:*)

Հրատարակված այդ ինվալիդներին ապահովելու որենքով (Անդրկ. Աշխատանքի ժող. Կոմիսարիատի վորոշումը 5 ապրիլի 1924 թ. № 91), այն աշատավորը, վորը աշխատանքի հետ կապված պատճառներից ստանում է հաշմանդամություն, այդպիսի ինվալիդների թոշակի չափը պիտի կախված լինի նրա փաստացի աշխատավարձից, վորը մինչև այդ պատահարը նա ստանում եր:

Նեմանապես փոխված եր ընտանիքների թոշակի չափը, վորոնց կերակրողները աշխատանքի հաշմանդամությունից են մահացել: Համաձայն այդ վորոշման 1-ի խմբի հաշմանդամ—ինվալիդները ստանում եյին 1924 թ. ապրիլի մեկից յուր ամբողջ թոշակը փաստորեն աշխատավարձի չափով **)

*) Ինվալիդներին խմբերի բաժանումն կատարում են առանձին հանձնաժողովներ, մասնակցությամբ մասնագետ բժիշկների (բժշկական մասնագիտական հանձնաժողով):
Ինվալիդության խմբերը՝ 1-խումբը լիովին ինվալիդներ, վորոնք լինելով անոգնական, կարիք ունին կողմնակի մշտական խնամքի (կաթվածները) պարալիտիկները (հոգեկան հիվանդներ, յերկու աչքով կույրեր, յերկու ձեռքից կամ վոտքից զրկվածներ և այլն): 2-դ խումբը—լիովին ինվալիդներ, բայց վորոնք կարիք չեն զգում կողմնակի խնամքի: 3-դ խումբը—ինվալիդներ, վորոնք կարող են ժամանակավոր թեթև աշխատանքներ կատարել, 4-դ խումբը—ինվալիդներ, վորոնք ստիպված են անցնել հասարակ թեթև աշխատանքի, 5-դ խումբը, վորոնք ստիպված են հրաժարվել իրենց պրոֆեսիայից և անցնել ուրիշ աշխատանքի, 6-դ խումբը—ինվալիդներ, վորոնք թեպետ և դժվարությամբ, բայց ընդունակ են իրենց առաջվա աշխատանքը կատարելու:

*) Պրոֆեսիոնալ հաշմանդամություն կոչվում է ամբողջ որգանիզմի կամ նրա մասի վնասումը, վոր առաջանում է անսպասելի, հանկարծակի արտաքին շարժառիթներից (դժբախտ դեպքերից վորը կապված է վարձու աշխատանքի կատարման հետ: Որինակներ՝ 1) Աշխատանքի ժամանակ արհեստանոցում բանվորի ձեռքը կըտրվել է, 2) աշխատանքից վերադառնալու, կամ տնից աշխատանքի գնալու ժամանակ բանվորը ընկնում է տրամվայի տակ, 3) բանվորի վնասումն հրդեհը ձեռնարկության մեջ հանգցնելու ժամանակ ադմիրիստրացիայի հանձնարարությամբ կամ առանց հանձնարարության և այլն:

**) Այն անձանց թոշակը, վորոնք տուժել են հաշմանդամությունից մինչև 1924 թ. ապրիլի մեկը, չի հաշվում տուժողի փաստորեն աշխատավարձով, այլ միջին աշխատավարձով բանվորի կամ ծառայողի նույն պրոֆիլության և նույն վորակի ինվալիդի ընակչության տեղի համեմատ:

երկրորդ խմբի ինվալիդները նրա 3/4 չափով և 3-րդ խմբի ինվալիդները նույն աշխատավարձի կեսի չափով։

Հաշմանդամությունից մահացածի ընտանիքը, բաղկացած 3 և ավել աշխատանքի վոչ ընդունակ անդամներից, ստանում եր 3/4, 2 անդամից — կեսը և մեկ անդամից—կերակրողի փաստորեն աշխատավարձի $^1/_3$-ը։

Այդ որենքից հետո հրատարակվեց դարձյալ որենք, վորով, ինչպես հաշմանդամները, պետք է ապահովվեն նույն չափերով և աշխատանքի ինվալիդները, վորոնք աշխատանքի ընդունակությունը կորցրել են շնորհիվ պրոֆեսիոնալ հիվանդության *) նմանապես ընտանիքը անդամները այն անձանց, վորոնք մահացել են պրոֆհիվանդություններից։

Այն անձինք, վորոնք տուժել են 1925 թ. մայիսի 1-ից հետո պրոֆեսիոնալ հաշմանդամությունից կամ պրոֆեսիոնալ հիվանդությունից, համաձայն Բժշկական մասնագիտական Հանձնաժողովի վորոշման, ստանում են՝ ըստ 4-րդ խմբի—յուր փաստորեն աշխատավարձի $^1/_3$, ըստ 5-րդ խմբի—$^1/_6$ և ըստ 6-րդ խմբի—այդ աշխատավարձի $^1/_{10}$-ը։

Այդ դեպքում ինվալիդ—հաշմանդամների և պրոֆհիվանդություններից տուժածներին թոշակը տրվում է անկախ նրանց ունեցվածքի դրությունից։

Թոշակ չի տրվում միայն նրանց, վորոնք կեղեքում են ուրիշի աշխատանքը փող վաստակելու նպատակով, կամ թե պարապում են առևտուրով 2-րդ կարգից վեր պատենտով։

Ծառայության ժամանակամիջոցը ավարտողների կենսաթոշակի մասին

Բացի ընդհանուր ինվալիդության, պրոֆհաշմանդամության կամ պրոֆհիվանդության թոշակներից, Սոցապդրամարկղը ներկայումս լուսավորության գործի աշխատավորների ապահովումն և անցկացնում (ցածր դպրոցների ուսուցիչների, գրադարանապետների և այլն)։

Այդ ձևի ապահովման թոշակը տրվում է հիշյալ աշխատավորներին այն պայմանով, յեթե նրանք այդ պաշտոնում ունեն 25 տարվա աշխատանքի ստաժ, վորոնց 5 տարին Խորհրդային Իշխանության որերով։ Այդ թոշակը տարեկան կազմում է 240 ռուբ.։

Անկյալների անկելանոցներում ապաստանելու մասին

Յուրաքանչյուր աշխատանքի անկյալ (ինվալիդ), յեթե նա ցանկանում է, կարող է տեղավորվել անկելանոցում (ինվալիդի տանը)։ Անդրյերկաթսոցապդրամարկղը չունի յուր ինվալիդի տները։ Այդ պատճառով նա համաձայնության է յեկել Վրաստանի սոցիալական ապահովման ժողովրդական Կոմիսարիատի հետ, և վերջինը ընդունում է յուր ինվալիդի տներում Անդրյերկաթսոցապդրամարկղի աշխատանքի ինվալիդներին։

*) Պրոֆեսիոնալ հիվանդություն կոչվում է այն հիվանդությունը, վորը միանգամից չի արտահայտվում, այլ զարգանում է յերբեմն բավական յերկարատև պրոֆեսիայի պայմանների ազդակար ներգործությունից աշխատավորի որգանիզմի վրա, որինակ՝ մուրճահարների և կաթսայագործների խլությունը, տեսողության ազդավումն մետաղ հալողների, յեփողների, շիկացնողների և այլն։

Յեթե ինվալիդը համաձայնվում է տեղավորվել ինվալիդի տանը, այն ժամանակ նրա ընտանիքը թոշակ չի ստանում, վորովհետև դա կնշանակեր մեկ ինվալիդին յերկու թոշակի տրվումն, վոր որենքով նախատեսված չե։

Առ մեկն հոկտեմբեր 1925 թ. վրաստանի ինվալիդի տներում գտնվում եր Անդրյերկաթսոցապդրամարկղի 6 պենսիոներներ *)։

Յուրաքանչյուրի վրա ինվալիդի տանը մինչև հոկտեմբերի 1-ը 1925 թ. ծախսվում եր ամսական 15 ռուբ. 32 կոպ.

Անդրյերկաթսոցապդրամարկղի կենսաթոշակավորների արտոնությունները

Անդրյերկաթսոցապդրամարկղի բոլոր պենսիոներները ոգտվում են բժշկական ոգնության բոլոր ձևերով Անդրկովկասյան յերկաթուղիների բուժհիմնարկություններում։ Աշխատանքի բոլոր ինվալիդները իրավունք ունեն ստանալ պրոտեզներ. (արվեստական վերջավորություններ)։

Բոլոր ինվալիդների վրա, վորոնք ապրում են քաղաքներում, տարածվում են բնակարանային և ջրով ոգտվելու համար արտոնությունները։

Ներկայումս ինչ չափի կենսաթոշակներ են նշանակված

Բոլոր պենսիոներների համար (վոչ հաշմանդամների և վոչ պրոֆհիվանդություններից ինվալիդների) ներկայումս (հոկտեմբերի մեկից 1925 թ.) մեզ մոտ հիմնված են յետևյալ ամսական թոշակների չափերը։

Ինվալիդի խմբեր		Անվանումն հաշիրապետությունների			
		Ադրբեջան.		Վրաստան.	Հայաստան
		Բազ. համար	Մնացած տեղերի համար		
Ինվալիդներ.	I	30 ռ.	21 ռ.	25 ռ.	20 ռ.
	II	20 ռ.	14 ռ.	16 ռ. 70 կ.	13 ռ. 35 կ.
	III	15 ռ.	10 ռ. 50 կ.	12 ռ. 50 կ.	10 ռ.
Ընտանիքներ.	3 և ավել անաշխատունակներ	20 ռ.	14 ռ.	15 ռ. 50 կ.	13 ռ. 35 կ.
	2 անդամ	15 ռ.	10 ռ. 50 կ.	12 ռ. 50 կ.	10 ռ.
	1 անդամ	10 ռ.	7 ռ.	8 ռ. 40 կ.	6 ռ. 70 կ.

*) 4 տղամարդ և 2 կին.

1008
37535

Կենսաթոշակավորների համար վարձան ծախսված է արված

Բոլոր պենսիոներների և մահացածների ընտանիքներին ապահովման համար Անդրյերկաթուղագրամարկը ընթացիկ տնտեսական տարում ծախսել է 407198 ր. 46 կ. Այս գումարի մեջ չի մտնում պենսիոներներին նպաստների լրացուցիչ ձևերի համար ծախսը։

Հոկտեմբերին 1924 թ. ապահոված ինվալիդների թիվը Անդրյերկաթուղագրամարկի կողմից յեղել է 1156 մարդ և ընտանիքի անդամներ (ընտանեկան խմբեր) 1694 մարդ։ Իսկ 1-ին հոկտեմբերի 1925 թ. յեղել է՝ ինվալիդներ—1158 մարդ, այդ թվի մեջ հաշմանդամներ 163 և ընտանիքներ—1971 (նույն թվի մեջ 217 աշխատանքի հաշմանդամությունից մահացածների ընտանիք)։

Տրված թոշակների ընդհանուր քանակը 1-ին հոկտեմբերի 1925 թ. այդպիսով յեղել է 3129.

VI

ԱՆԳՈՐԾՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄՆ

Անգործների ապահովումն։

1924 թ. մինչև հոկտեմբերի սկիզբը շատ սահմանափակ եր այն անձանց թիվը, վորոնք ապահովման իրավունք ունեյին գործազրկության պատճառով։

Վորպեսզի այն ժամանակ գործազրկության պատճառով նպաստի իրավունք ձեռք բերել, անհրաժեշտ եր, վոր վորակյալ բանվորը գործից հեռանալուց վոչ ուշ քան մի ամսվա ընթացքում ցուցակագրվեր աշխատանքի Բորսայում, իսկ վոչ վորակյալը—վոչ ուշ, քան 2 շաբաթ։

Դրա հետևանքը յեղավ այն, վոր ահագին քանակության գործազուրկներ, այդ սահմանված կարճ ժամանակամիջոցը ուշացնելու և Բորսայում չցուցակագրվելու պատճառով, նպաստ ստանալու իրավունքը կորցնում եյին։

Այժմ գործը այլ կերպ է դրված։ 1924 թ. հայտարարվեց որենք, վորով Բորսայում ցուցակագրվելու ժամանակը յերկարացրված է։ Վորակյալ բանվորների համար ժամանակ եր տրված Բորսայում ցուցակագրվելու 3 ամիս աշխատանքը թողնելու որից։ Բարձր վորակի մտավոր աշխատավորների և զինակոչը ավարտածների—2 ամիս և այլ բանվորական խմբակների—1 ամիս։

Այն հանձնաժողովներին, վորոնք գործազրկության համար նպաստներ են նշանակում, միևնույն ժամանակ վերապահված եր իրավունք, առանձին դեպքերում, թեկուզ և ժամանակը անցած լինի, նպաստ նշանակել։

Բոլոր նպաստ ստացող գործազուրկները բաժանվում են 2 խմբերի՝ առաջի խմբի մեջ մտնում են վորակյալ աշխատավորները, իսկ երկրորդի մեջ—քիչ վորակյալները և բոլորովին վոչ վորակյալները։

Թե դրամարկղը վորքան գործազուրկների ե անցյալ տարի յուրաքանչյուր ամիս ապահովել, ցույց է տալիս հետևյալ աղյուսակը։

Խմբեր.	1924 թ.			1925 թիվ.									
	X	XI	XII	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	
	17	12	23	45	50	52	41	31	28	25	20	17	
	134	149	235	428	600	623	545	460	358	281	187	186	

Աղյուսակից յերևում է, վոր ապահովություն ստացող անդրկովկասի յերկաթուղիների գործազուրկ բանվորների թիվը ամենից շատ 1925 թ. մարտ ամսին եր և այդ ամսից հետո ամբողջ ժամանակը քչանում եր։ Ապահոված գործազուրկների քչացումը կարելի է բացատրել և նրանով, վոր անգործներից կազմված արտելը «Ժելդորպուտը» կլանել է յերկաթուղային անգործների նշանավոր քանակը։ Ներկայումս «Ժելդորպուտ»-ի արտելում զբաղված են 900-ից ավել անգործներ։

Անգործներին վերապահված արտոնությունները։

Բոլոր անգործները, անկախ նրանից, ստանում են նպաստ գործազրկության համար թե վոչ, Անդրյերկաթուղագրամարկղի պենսիոներների հետ հավասար չափով ստանում են բոլոր ձևի ձրի բժշկական ոգնություն։

Թե պենսիոներները, թե նպաստ ստացող գործազուրկները ոգտվում են բնակարանի և ջրի վարձի արտոնյալ տարիֆով։

Բոլոր նպաստ ստացող գործազուրկները առաջի հերթին են ուղարկվում գործի, քան թե նրանք, վորոնք նպաստներ չեն ստանում։

Նպաստի չափը։

Համեմատելով 1925 թ. սկզբի հետ գործազուրկների նպաստների չափը նշանավոր կերպով բարձրացրած է։ *)

1925 թ. հոկտեմբերի 1-ից Անդրկովկասյան յերկաթուղիների գործազուրկների ամսական նպաստների չափը հետևյալն է՝

Ադրբեջանում, Բաքու քաղաքում, գործազուրկների 1-ի խումբը ստանում է 18 ր., յերկրորդ խումբը—12 ր. Ադրբեջանի մնացած վայրերում այդ խմբերը համապատասխանորեն ստանում են 12 ր. 60 կ. և 8 ր. 50 կ.

Վրաստանում գործազուրկների 1-ի խումբը ստանում է 15 ր. իսկ յերկրորդը—10 ր. ամսական։

Հայաստանում նույն այդ խումբերը ստանում են 12 ր. և 8 ր.։ Այն ինչ 1924 թ. սկզբի գործազուրկների նպաստը 1-ի խմբի համար 7 ր. 50 կ. բարձր չի եղել, 2-րդ խումբը այդ ժամանակ 5 ր-ուց ավել ամսական չեր ստանում։

---

*) Գործազուրկների 1-ի խումբը այժմ նպաստ է ստանում տվյալ վայրի միջին ամսական աշխատավարձի 30% չափով, իսկ յերկրորդ խումբը—այդ աշխատավարձի 20% չափով։

Գործազրկության նպաստ տրվում է 6 ամիս ժամանակաշրջանում մի տարի անգործության ընթացքում, սկսած նպաստի նշանակման առաջի որվանից։ Այդ ժամանակը նպաստներ նշանակող հանձնաժողովը կարող էր վորոշ դեպքերում յերկարացնել տարվա մեջ մինչև 9 ամիս, վոր կախված է գլխավորապես աշխատանքի շուկայի դրությունից և ապահովագրական միջոցներից։

Ժամանակավոր աշխատանքի վոչ ընդունակ գործազուրկները շարունակում են ստանալ հիվանդության ժամանակ իրանց սովորական նպաստը։

Հղի գործազուրկ կանանց գործազրկության նպաստ տրվում է 6 շաբաթվա ընթացքում մինչև ծննդաբերությունը և 6 շաբաթ հետո այն չափով, վորքան վորոշված է անգործների 1-ի խմբի համար, ի նկատի չունենալով, թե վոր գործազուրկների խմբին է նա պատկանում։

Հղիության ժամանակաշրջանը հաշվի չի առնվում անգործության համար նպաստ ստանալու ժամանակի նկատմամբ։

Վարման գումար է ծախսված գործազուրկներին ապահովելու համար։

Անցյալ տնտեսական ամբողջ տարին (հոկտեմբերի 1-ից մինչև 1925 թ. հոկտեմբերի 1-ը) Անդրյերկաթսոցապդրամարկղը անգործներին ապահովման համար ծախսել է 25.138 ռ. 41 կ.։ Այս գումարի մեջ չի մտնում այն ծախսը, վոր տրված է անգործներին լրացուցիչ նպաստների ձևով։

VII

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՊԱՍՏՆԵՐ

Ապահովումն լրացուցիչ տեսակներով։

Այն նպաստները, վորոնք Անդրյերկաթսոցապդրամարկղը բաց է թողնում յերեխաների ոժիտի (ծննդաբերության), նորածինների կերակրման (9 ամսվա ընթացքում ծնված որվանից) և թաղման համար, կոչվում է լրացուցիչ։

Լրացուցիչ կոչվում են այն պատճառով, վոր նրանք կազմում են հիմնական նպաստների լրացումն (թոշակների, ժամանակավոր աշխատանքի ընդունակության կորուստի և գործազրկության նպաստների)։

Լրացուցիչ տեսակների չափը

Լրացուցիչ տեսակներով ապահովելու չափը։

Լրացուցիչ տեսակներով ապահովելու չափը նույնպես նշանավոր կերպով բարձրացած է համեմատած 1924 թ. սկզբի հետ։ Առաջ յերեխի ոժիտի և թաղման նպաստը - 10 ռ. 50 կոպեկից և կերակրման համար 2 ռ. 70 կոպեկից ավելի չեր։ 1925 թ. հոկտեմբերի 1-ից այդ նպաստների չափը հետևյալն է *)։

*) Լրացուցիչ ձևերի նպաստների չափերը վորոշելու համար, վոր մտցրած են 1925 թ. հոկտեմբերի 1-ից, ծառայել է այն յելակետը, վորով ի նկատի յե առնվել տվյալ միջավայրի միջին ամսական աշխատավարձը, նշանակելու՝ ընդհանուր ինվալիդության համար թոշակ և գործազուրկների համար նպաստ։ Յերեխի ոժիտ 1925 թ. հոկտեմբերի 1-ից տրվում է այդ աշխատավարձի 50%-ը, կերակրման համար—այդ նպաստի $^1/_4$-ը, մինչև 10 տարեկանների համար թաղման նպաստ—այդ աշխատավարձի 50%-ը, իսկ 10 տարեկանից բարձր՝ թաղման համար—տվյալ վայրի միջին ամսական աշխատավարձի ամբողջ չափով։

ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ	ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆ			
	Ադրբեջան		Վրաստան	Հայաստան
	Բաղվի համար	Ուրիշ վայրերի համար		
Յերեխի ոժիտ . . .	30 ր.—	21 ր.—	25 ր. — կ.	20 ր.
Կերակրումն	7 ր.50 կ.	5 ր.25 կ.	6 ր. 30 կ.	5 ր.
Թաղման համար՝ ա) 10-ից վոչ մեծերին	30 ր.—	21 ր.—	25 ր. — կ.	20 ր.
բ) 10-ից մեծերին .	60 ր.—	42 ր.—	50 ր. — կ.	40 ր.

Վարման դրամ է ծախսված լրացուցիչ նպաստների համար։

Անցյալ տնտեսական տարին Անդրյերկաթսոցապդրամարկղը ծախսել է լրացուցիչ նպաստների—347.389 ր. 57 կ.։ Այս գումարի մեջ մտնում են Դրամարկղի կատարած, վորպես լրացուցիչ նպաստների համար ծախսեր՝ տրված բոլոր ապահովագրվածներին, բանվորներին և ծառայողներին, բոլոր պենսիոներներին, գործազուրկներին ու նրանց բոլոր ընտանիքի անդամներին։

VIII

ԱՆԴՐՅԵՐԿԱԹՍՈՑԱՊԴՐԱՄԱՐԿՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵՋ

Բժշկական ոգնություն ապահովագրվածներին։

Ապահովագրվածների սոցիալական ապահովագրման ամենակարևոր կողմերից մեկը, կազմում է բժշկական ոգնությունը, վորը վարում է Անդրկովկասյան յերկաթուղիների Առաջինը *) յուր բուժական հիմնարկություններին միջոցով։

Անդրյերկաթսոցապդրամարկղի բոլոր ապահովածներին (բանվորներին և ծառայողներին, պենսիոներներին և գործազուրկներին, նույնպես և նրանց ընտանիքի բոլոր անդամներին) ցույց է տրվում բոլոր ձևերի ձրի բժշկական ոգնություն, այն է՝

ա) սկզբնական ոգնություն հանկարծակի հիվանդությունների և դժբաղդ դեպքերի ժամանակ,

բ) ամբուլատորիական ըստ բոլոր մասնագիտության բժշկություն,

գ) մանկաբարձական,

*) Առաջինի լրիվ անունը հետևյալ է՝ «Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի Հանրապետությունների Առաջնորդների Լիազորի Անդրկովկասյան յերկաթուղիների Առաջինի Վարչություն, Վրաստանի Առաջնորդներին կից»։

դ) հիվանդանոցային բժշկություն,

յե) բժշկական ոգնություն տանը և

գ) սանիտարական-կուրորտային բժշկություն (վոր կատարում է անմիջականորեն Անդրյերկաթսոցապդրամարկղը)։

Բացի դրանից, նրանք ստանում են ձրի դեղորայք, փաթեթների նյութեր, նաև բժշկական պիտույքներ և ոժանդակիչ միջոցներ (պրոտեզներ, վորոնք կարևոր են թե բժշկության հաջողության և թե հիվանդությունների կամ հաշմանդամությունների հետևանքների թեթևացման տեսակետից (ակնոցներ), անթացուպեր (կոստիլներ), բանդաժներ կորսետներ և այլն)։

Բժշկական ոգնություն ապահովագրվածներին ցույց է տրվում ի հաշիվ այն միջոցների, վորոնք Անդրյերկաթսոցապդրամարկղը բաց է թողնում ի լրացումն գումարների*), վորոնք Առաջինը ստանում է պետությունից և ուրիշ աղբյուրներից նույն նպատակի համար։

Անդրյերկաթսոցապդրամարկղին, իբրև լրացուցիչ ֆոնդ, բաց թողնված գումարները, նախավորոշված են բժշկական ոգնությունը վորակով լավացնելու համար։

Բացի Անդրյերկաթսոցապդրամարկղից, բժշկական ոգնության գործին ոգնում է և Անդրկովկասյան յերկաթուղիների վարչությունը, վորը յուր միջոցներով ամբողջ գծերի վրա բոլոր բնակարանները և բուժհիմնարկությունները, վորոնցով ոգտվում են հիվանդ ապահովագրվածները, լուսավորում է, կազմակերպում է ջրի մատակարարումը, կատարում է վերանորոգումներ, ձրի տեղափոխում է հիվանդներին, բժշկական գույքը և այլն։

Բժշկական ցանցը

Առաջինը բժշկական ոգնություն է ցույց տալիս 45.000 **) ապահովագրվածների, իսկ յեթե նրանց ընտանիքի անդամներին ել հաշվել, այն ժամանակ յերկաթուղային բնակչության 150.000 մարդու։

Այդ բնակչության համար Անդրկովկասյան յերկաթուղիների վրա կա 24 բժշկական մասեր, ամբուլատորիային ոգնության համար 12 կայաններ, ատամնաբուժական կաբինետներ 18, բուժակայարաններ 2 և զանազան մասնագիտական***) հիվանդությունների համար 790 մահճակալ։ Ամբողջ այդ բժշկական ցանցը տարածված է ավելի քան 2000 վերստի տարածության վրա։

---

*) Այն միջոցները, վոր Դրամարկղը բաց է թողնում Առաջինին, կազմում են նրա բոլոր ծախսերի 55%—60%։

**) 45.000 ապահովագրվածների թվի մեջ են մտնում աշխատանքի ինվալիդները, թոշակ ստացող այրիները, վորբերը և գործազուրկները։

***) Մահճակալի ոգնություն տրվում է հետևյալ հիվանդանոցներում. Բաթումում, Սամտրեդի, Սուրամում, Թիֆլիսում, Գանջայում, Բագվում, Լենինականում, Նախիջևանում, Ցեմի և Ռոթայիսում։ (Ցեմի մահճակալների ոգնություն տրվում է տարվա վորոշ ժամանակ—սեզոնում)։ Համեմատած 1920 թ. հետ Անդրկովկասյան յերկաթուղիների մահճակալների թիվը 385-ով ավելացած է։

Ինչումն է արտահայտվել Անդրյերկաթսոցապդրամարկղի մասնակցությունը ապահովագրվածներին բժշկական ոգնության գործում։

Անդրյերկաթսոցապդրամարկղը բժշկական գործի վրա մեծ ուշադրություն է դարձրել։ Նա հետաքրքրվել է ապահովագրվածների բժշկական գործով, թե կենտրոնում և թե տեղերում, հետազոտելով գործի դրությունը Անդրյերկաթսոցապդրամարկղի և Շրջդրամարկղի Կոմիտեյի ապպարատի միջոցով։

Բոլոր բժշկական ոգնության վերաբերյալ նկատած թերությունները և բժշկական գործի բոլոր խոշոր հարցերը Անդրյերկաթսոցապդրամարկղը քննել և վորոշել է Անդրկովկասի յերկաթգծի Առաջինի ներկայացուցիչների մասնակցությամբ։

Ապահովագրվածներին բժշկական ոգնության ծախսերի նախահաշիվը ամեն տարի Առաջինը անպայմանորեն համաձայնեցնում է Անդրյերկաթսոցապդրամարկղի հետ։

Այդպիսի խոշոր գործ, ինչպիսին է բժշկական գործը, միշտ և շարունակ կարիք է զգացվում բազմակողմանի և մեծ բարեփոխումներ մտցնելու, վորպեսզի գործը լավ հիմքերի վրա դրվի։

Այդ գործի մեջ անցյալից շատ թերություններ են մնացել, սակայն շատ բաներում նկատելի բարելավումներ յեղել են։

Անդրյերկաթսոցապդրամարկղի աջակցությունն է դեր խաղացել, վոր բժշկական ոգնության գործը ընթացիկ տնտեսական տարին համարյա գծերի վրա ամենուրեք հանձնված է փորձված բժիշկների ձեռքը (ֆելդշերական պունկտերը համարյա ամեն տեղ փոխարինված են բժշկական կայաններով։

Բժշկական գիտությունը բարձրացնելու համար Անդրկովկասյան յերկաթուղիներից շատ բժիշկներ ուղարկվել են Խորհրդային Միության զանազան խոշոր քաղաքներ։

Մի քանիսները, նույնիսկ, ուղարկվել են արտասահման (Գերմանիա, Իտալիա և այլն)։

Բժշկական և սոցիալական ապահովագրման կարևոր հարցերի քննության համար կազմակերպվում է տարեկան վոչ պակաս քան մեկ անգամ Անդրկովկասյան յերկաթուղիների բժիշկներից և սոցիալական ապահովագրման աշխատակիցներից խորհրդակցություն (մեկ այդպիսի խորհրդակցություն յեղել է, որինակ, 1925 թ. մայիսին)։

Անդրկովկասյան յերկաթգծի վրա կազմակերպված է ատամի տեխնիքական ոգնություն (հիվանդներին հայթայթելու ատամի պրոտեզներ—արվեստական ատամներ շինելու)։

Վորպեսզի ապահովագրվածների կարիքները բավարարել ցեխաբուժմամբ, Անդրյերկաթսոցապդրամարկղը կառուցանում է Լենինականում ցեխաբուժարան, իսկ միևնույն ժամանակ ամառվա ընթացքում նրա ցեխաբուժարանը Ախթալայում և ջրաբուժությունը (վաննաները) Ցխալտուբայում արդեն գործում են և շատ ապահովագրված հիվանդներ ոգտվել են։

Բացի դրանից, ցեխաբուժությունը կազմակերպված է Թիֆլիսում և Բաթումում։ Միջոցներ են ձեռք առնված ելեքտրաբուժման գործը ուժեղացնել և բացի յերկու ուժեղ ռենտգենյան մեքենաներից, վոր դուրս են

գրված Գերմանիայից յերկաթգծի Վարչության և Առաջնի կողմից, Անդրյերկաթսոցապդրամարկղը յուր կողմից, ուժեղացնելու նպատակով, դուրս է գրել յերրորդ մեքենան։

Այդ ռենտգենյան մեքենաները նախավորոշված են Թիֆլիսի, Բագվի և Լենինականի համար։

Դեղորայքով ոգնության գործը լավացրված է։

Միջոցներ են ձեռք առնված գոյություն ունեցող յերկաթուղային դեղատները լայնացնել։

Հիվանդանոցների սպիտակեղենների, տնտեսական և բժշկական գույքերի հայթայթման գործը լավացրված է (այս նպատակի համար Անդրյերկաթսոցապդրամարկղը բաց է թողել 90.515 ռ.)։

Հիմնականորեն վերանորոգված է Թիֆլիսի յերկաթուղային հիվանդանոցը։ Նոր շենք է շինվում Թիֆլիսի յերկաթուղային դեղատան համար։ Բագվի հիվանդանոցը հին շենքից տեղափոխված է նորը։ Լենինականի հիվանդանոցին կից շինվում է նոր շենք, հիվանդանոցը լայնացնելու նպատակով։

Նորոգված են բոլոր ամբուլատորիայի շենքերը։

Աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար Անդրկովկասի յերկաթուղիների վրա մտցրված է յերեկոյան ամբուլատորիայի հիվանդների ընդունելություն, վորպեսզի բանվորությունը չկորցնի յուր աշխատանքի ժամերը։

Սոցիալական հիվանդությունների—մալյարիայի և տուբերկուլյոզի դեմ կռիվը ուժեղացրած է։

Ներկայումս Անդրյերկաթսոցապդրամարկղը զբաղված է հերթական շատ կարևոր հարցով՝ կազմակերպել բժշկական ոգնություն այն ապահովագրվածներին և նրանց ընտանիքի անդամներին, վորոնք բժշկական հիմնարկություններից հեռու յեն ապրում (գծից հեռու)։

Անցյալ տնտեսական տարում Անդրյերկաթսոցապդրամարկղը ինչ գումարներ է տվել Առաջնին։

1924 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1925 թ. հոկտեմբերի 1-ը Անդրյերկաթսոցապդրամարկղը տվել է Առաջնին ապահովագրվածների բժշկական ոգնությունը լավացնելու նպատակով—783.771 ռ. 57 կ.։

Այս գումարի մեջ չեն մտնում այն դրամները, վորոնք Անդրյերկաթսոցապդրամարկղը տվել է պահեստի բժշկական ֆոնդից Առաջնին, նրա արտակարգ ծախսերի համար։

Այդ ֆոնդից Առաջնի համար դուրս է գրված 90.515 ռ.*) և արդեն տրված է 72.004 ռ.։ Բացի դրանից, Անդրյերկաթսոցապդրամարկղը Առաջնին բաց է թողել ընթացիկ տարվա մեջ ատամնատեխնիկական ոգնության համար 500 ռ. և քինինի համար 929 ռ. 34 կ.։

Բժշկության համար այդպիսի հսկայական ծախսերը բացատրվում է նը-

*) Առաջնին բաց թողած 90.515 ռ. ծախսվել է դրամարկղի անմիջական ցուցմունքներով և նրա խիստ հսկողության տակ։

րանով, վոր յերկաթուղագծերի բնակչությունը մի կողմից ավելի շատ է սկսել դիմել բժշկական ոգնության, իսկ մյուս կողմից վորովհետև Առաջինը մի շարք միջոցներ է ձեռնարկել, մեծ ծախսեր արել կռվելու այն պատճառների դեմ, վորոնք նպաստում են այդ բնակչության հիվանդանալուն (մալյարիայով, տուբերկուլյոզով և այլ սոցիալական հիվանդություններով)։

Այս վերջի միջոցները կոչվում են նախազգուշացման—պրոֆիլակտիկ միջոցներ*)։

Համեմատած անցյալ տարվա հետ, բժշկական ոգնության դիմումը շատացել է համարյա յերկու անգամ, և դա վոչ թե նրա համար, վոր մարդիկ ավելի շատ են սկսել հիվանդանալ, այլ նրա համար, վոր տրանսպորտի բժշկական գործը ավելի յե լավացել։

Ներկայումս հիվանդանոցային մի հիվանդը Առաջնին որական ծախս է նստում 2 ռ. 98 կ., իսկ մեկ ապահովագրվածի ամբուլատորիայի այցելման նպատակով առաջացրած ծախսը, միջին թվով, կազմում է 57 կոպեկ։

Ամբողջ բժշկական թե ավադ, թե կրտսեր պերսոնալի աշխատավարձը, հաշվելով և Առաջնի Վարչությունը Թիֆլիսում, կազմում է Անդրկովկասյան ճանապարհների Առաջնի բոլոր ծախսերի համարյա կեսը։

IX

ԱՆԴՐՅԵՐԿԱԹՍՈՑԱՊԴՐԱՄԱՐԿՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՆԱՏՈՐԻԱԿԱՆ-ԿՈՒՐՈՐՏԱՅԻՆ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Սանատորիական-կուրորտային ոգնություն։

Անդրյերկաթսոցապդրամարկղը բժշկական ոգնության կազմակերպման մեջ մասնակցելուց բացի, նա ապահովագրվածներին ցույց և տալիս նաև սանատորիական-կուրորտային ոգնություն (բժշկություն կլիմայական վայրերում զանազան հիվանդությունների՝ թոքերի, սրտի, ջղերի, ստամոքսի, ռևմատիզմի և այլն)։

Սանատորիական-կուրորտային ոգնություն է ցույց տալիս Անդրյերկաթսոցապդրամարկղը արդեն յերկու վերջին տարիները (1923—1924 թ. և 1924—1925 թ.)։

Առաջին հերթին սանատորիաներ ուղարկվում են ֆաստակար արդյունաբերության բանվորները, վորոնց թիվը պետք է կազմի վոչ պակաս, քան բոլոր ուղարկվողների 80%-ը։ Մնացած 20%-ը կազմում են ծառայողներ և, աննշան չափով ապահովագրվածների ընտանիքի անդամներ։

Սանատորիական բժշկությունը—ամենաթանկ բժշկական ձևն է, այդ

*) Առաջնի պրոֆիլակտիկ միջոցները առանձին ուշադրություն են դրավում մալյարիայի դեմ կռվելու միջոցները՝ ճահիճների չորացնումն, մազուտով ցողումն, մալյարիայով վարակված վայրերում բանվորների բնակարանների անցքերը մետաղյա ցանցով ծածկելը և ընդհանուր խինինիզացիայի յենթարկումն (բոլորին խինին ընդունել տալը)։

պատճառով ուղարկվողների թիվը սահմանափակված է շնորհիվ նրան, որ ապահովման դրամարկղների միջոցները սուղ են։

Հիվանդներին կուրորտ ուղարկելու համար ընթացիկ տարվա մեջ, տեղերում կազմակերպված եր առանձին ընտրության հանձնաժողովներ, որտեղ մասնակցում էին բժիշկներ և բանվորական կազմակերպություններից ներկայացուցիչներ։ Այդ հանձնաժողովները կազմակերպված էին այն նպատակով, որպեսզի սանատորիա ուղարկվեն, սանատորիական բժշկության ավելի շատ կարիք ունեցողները և նրանցից այնպիսիները, որոնց սանատորիական բժշկությունը կարող է կարճ ժամանակամիջոցում (1—1½ ամսում) ոգուտ տալ։

Ծանր հիվանդներին (գլխավորապես թոքային տուբերկուլյոզ ունեցողներին), ժանավանդ պառկածներին, բարձր տաքություն ունեցողներին ոչ մի դեպքում չեն ուղարկել սանատորիա, որովհետև սանատորիական բժշկությունը նրանց ոգուտ չի տալիս, իսկ շատ դեպքերում նույնիսկ վնաս է բերում։

Սանատորիաներ չեն ուղարկել նաև առողջ մարդկանց, որոնք աշխատանքից հոգնած են և կարիք ունեն միայն հանգստի տներում մնալու։

Վորքան մարդ է յեղել ուղարկված սանատորիաներ յեվ կուրորտներ անցյալ տնտեսական տարին։

Անդրյերկաթսոցապդրամարդը (1924—1925) տարին տեղավորել է սանատորիաներում և կուրորտներում 742 մարդ, որոնցից 575 բանվոր դաղդահից, մինչդեռ նախանցյալ տարին (1923—1925) ընդամենը ուղարկված եր 423 մարդ։

Այսպիսով հաշվետու տարին ուղարկված է 319 մարդ ավելի, քան նախանցյալ տարին։ Հիվանդները ուղարկվում են հետևյալ կլիմայական վայրերը՝ Աբասթուման, Դիլիջան, Ցեմի, Ցաղվերի, Բորժոմ, Քոբուլեթ, Եսսենտուկի, Ժելեզնովոդսկ, Կիսլովոդսկ, Պյատիգորսկ, Ցխալտուբո և Ախտալա։

Վորքան է ծախսված սանատորիական կուրորտային գործի համար։

Անդրյերկաթսոցապդրամարկղը սանատորիական-կուրորտային գործի վրա անցյալ տարի ծախսել է 199.836 ռ. 41 կ.։ Այս գումարի մեջ են մտնում հիվանդներին պահելու համար թե սեփական սանատորիայում—Ցեմիում, և թե ուրիշ կազմակերպությունների սանատորիայում վարձով վերցրած մահճակալների ծախսերը։

Ցեմիում մի հիվանդի վրա ծախսվում եր որական 4 ռ. 10 ռ., իսկ վարձով վերցրած տեղերում—5 ռ. 33 կոպ.։

X

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՀԱՆԳՍՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ամառային հանգիստ աշխատավորներին։

Սանատորիական-կուրորտային բժշկության մեջ կարիք ունեցող հիվանդների հետ միասին կան առողջ թվով հոգնած, հյուծված, արյունպակաս, ջղերի քայքայումով բանվորներ և ծառայողներ, որոնք կարիք ունեն ուժեղ սննդի և մաքուր ոդում հանգստության։

Այդպիսի հիվանդների համար Անդրյերկաթսոցապդրամարկը ունի ամառանոցներում հատուկ բնակարաններ—հանգստի տներ։

Անդրյերկաթսոցապդրամարկղը ունի յուր սեփական հանգստի տները Շովելյանում, Հաջիբեկնդում (Ադրբեջանում) և Ղարաքիլիսա (Հայաստանում)։ Վրաստանում նա հանգստի տներ չունի և տրանսպորտի աշխատավորների համար վարձում է Վրաստանի Պրոֆեսիոնալ Միությունների Խորհրդի հանգստի տներում առանձին տեղեր (Բորժոմոմում, Ցաղվերում և ուրիշ տեղերում)։

Հանգստի տներ ուղարկելու համար նույնպես կազմակերպված են ընտրության հանձնաժողովներ, որի մեջ էին մտնում գլխավորապես բանվորների ներկայացուցիչները։

Այդ հանձնաժողովների մեջ մտցրված եր և բժիշկներ, որովհետև անհրաժեշտ եր ստուգել—բանվորը արդյոք հիվանդության պատճառով կարիք ունի արձակուրդի, թե ուղղակի հերթական արձակուրդի, որպեսզի ույժերը վերականգնեցնի։

Հանգստի տները նույնպես ուղարկվում էին առավելապես դաղդյահից բանվորներ, բայց բոլոր ուղարկվածների 75%-ի չափով։

Հանգստի տներում բանվորները և ծառայողները անց էին կացնում իրենց հերթական յերկուշաբաթվա արձակուրդը։ Այդ տներում մնալը մեծ ոգուտ է բերում բանվորներին և ծառայողներին, որովհետև հանգստացած և ամրացած աշխատավորները նվազ չափով են յենթակա հիվանդանալուն։

Վորքան մարդ է հանգստացել յեվ վորքան փող է ծախսվել հանգստի տների վրա։

1925 թ. ամբողջ ամառվա սեզոնին հանգստի տներով ոգտվել են 1811 մարդ։ Անցյալ տարվանից 403-ով ավել։

Անդրյերկաթսոցապդրամարկղը հանգստի տների վրա անցյալ ամառվա սեզոնում ծախսել է 171.958 ռուբլի։

Մեր հանգստի տներում հանգստացողը մի որը մեջ վրա նստում եր 2 ռ. 18 կ., իսկ Վրաստանի Արհեստակցական Միությունների Խորհրդի տներում մոտ 2 ռ.։

Այդպիսի տարբերության պատճառը նա յե, որ Անդրյերկաթսոցապդրամարկղի հանգստի տները բաժան-բաժան են, տնտեսական մասերը ջոկ-ջոկ է, մեկ էլ, որ սնունդը տրվում է սանատորիական։

XI

ԱՆԴՐՅԵՐԿԱԹՍՈՑԱՊԴՐԱՄԱՐԿՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Ծախս, Անդրյերկաթսոցապդրամարկղի ապահովագրման պահելու համար։

Բոլոր յերկաթուղիների ապահովագրամարկղների շտատները անցյալ տարի վորոշելիս ի նկատի յե առնվել, թե վորքան ապահովագրվածների կարիքներ պիտի հոգալ, վորքան է աշխատանքի ծավալը և վորքան տարածություն պիտի ընդգրկի այս կամ այն շրջանը։

Յեթե Անդրյերկաթսոցապդրամարկղի բոլոր ապահովագրվածների թվին

ավելացնել նպաստ ստացող պենսիոներներին, այն ժամանակ կը ստացվի 45.000 մարդ, չհաշված նրանց ընտանիքները։

Այդքան ապահովագրված մարդկանց կարիքները հոգալու համար Անդրկովկասյան յերկաթուղիների դրամարկղներում զբաղված են միայն 88 մարդ *)։

Անդրյերկաթսոցապդրամարկղի շտատները, թե կենտրոնում և թե գծի վրա պահելու և թե նրա բոլոր զուտ տնտեսական կարիքների ծախսերը, կոչվում են վարչական-տնտեսական կամ կազմակերպչական ծախսեր։

Անդրյերկաթսոցապդրամարկղը անցյալ հաշվետու տարին կազմակերպչական նպատակով ծախսել է յուրաքանչյուր ամիս, միջին թվով, այնքան գումար, որ յեթե բաժանել բոլոր ապահովագրվածների թվի վրա, յուրաքանչյուրի վրա կընկնի ամսական 25կոպեկ, իսկ տնտեսականները (ապահովագրողները) մտցնում են հաշվելով յուրաքանչյուրի վրա ամսական մոտ 6 ռ.։

Բայց անհրաժեշտ է նկատել, որ կազմակերպչական ծախսերի մեջ մտնում են ոչ թե միայն շտատը պահելու և մի շարք տնտեսական ծախսերը, այլ և ուրիշ ծախսեր՝ հրատարակչական, ապահովագրական և զանազան գրականություն ձեռք բերելու, ապահովագրական լուսավորության և թոշակ ուսանողներին, որոնք սովորում են Մոսկվայում սոցիալական ապահովագրման կենտրոնական դպրոցում։

Ինչպես կանոն, Անդրյերկաթսոցապդրամարկղը միշտ ձգտել է տնտեսել շտատ պահելու ծախսերի նկատմամբ։

Շնորհիվ այդ ապահովագրական ապպարատի ծախսերի մեջ տնտեսության, Անդրյերկաթսոցապդրամարկղին հաջողվեց անցյալ տարի (հոկտեմբերի 1-ից 1924 թ. մինչև 1-ն հոկտեմբեր 1925 թ.) տնտեսել 30.989 ռ. 57 կ. այդ գումարը Կոմիտեն վճռեց ծախսել սանատորիական-կուրորտային ոգնության ուժեղացման և հանգստության տների վրա, որ և կյանքի մեջ մտցրեց։

XII

ԱՆԴՐՅԵՐԿԱԹՍՈՑԱՊԴՐԱՄԱՐԿՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Անցյալ, 1924—1925 տարին, Անդրյերկաթսոցապդրամարկղը յուր աշխատանքի մեջ հաշվի յեր առել յերկաթուղիների միության 5-րդ համագումարի բանաձևի առաջարկությունները և Վերաստուգիչ Հանձնաժողովի ու Անդրկովկասյան Բանվոր-Գյուղացիական Տեսչության ցուցումները։

Այդ բոլոր առաջարկությունները և ցուցումները կյանքի մեջ են մտցրված լիովին և ծրագրային կարգով։

Անդրյերկաթսոցապդրամարկղը յուր կազմակերպչական աշխատանքը,

*) 26 մարդ կենտրում (Անդրյերկաթսոցապդրամարկղում) և 62 գծի վրա (7 շրջդրամարկղներում)։

ընդհանրապես, տանում է ոչ թե ըստ դեպքերի, այլ նախորոք, յուրաքանչյուր 3 ամսվա համար աշխատանքների մշակված ծրագրով (կվարտալ)։

Յուրաքանչյուր կվարտալը վերջանալուց ստուգում է կատարվում, թե նշանակված աշխատանքից ինչ է կատարած և ինչ է մնում կատարելու։ Չըկատարած աշխատանքները փոխադրվում են հետևյալ կվարտալը։

Հաշվետու տարին Անդրյերկաթսոցապդրամարկղը առանձնապես յուր հրահանգչական աշխատանքը ուժեղացրել է Շրջդրամարկղների նկատմամբ, թե գրավոր, թե բանավոր ձևով։

Վերաքննվել են բոլոր գործավարական, հաշվապահական և վիճակագրական ձևերը նրանց վերաբերյալ շրջաբերականների և հրահանգների հետ միասին, նրանցից թողնված է հնացած, գործածությունից դուրս յելածները և ցույց է տրված ընդհանուր ուղղություն։

Անդրկովկասյան յերկաթուղային սոցիալական ապահովագրման աշխատակիցների խորհրդակցություններ կազմակերպվել են յերեք անգամ։ Մեկը՝ 1924 թ. նոյեմբերին բուժհիմնարկությունների բժիշկների հետ, մյուսը՝ 1925 թ. մայիսին, նույնպես բժիշկների հետ, յերրորդը՝ տեխնիքական աշխատակիցների՝ 1925 թ. հունիսին։

Առաջի յերկու խորհրդակցությունները վճռել են մի շարք ընթացիկ կարևորագույն գործնական հարցեր, որոնք վերաբերվում են ապահովագրման, բժշկական ոգնության և բժշկա-ապահովագրման վերաստուգման։

Յերրորդ խորհրդակցությունը—մի շարք գործնական հարցեր տեխնիքական, գործառնական, հաշվեվության և վիճակագրական բնույթ կրող։ Բացի դրանից դարձյալ յեղել է տեղերից հրավիրված աշխատակիցների հետ 2 խորհրդակցություն Շրջդրամարկղների վերաքննության հետևանքի առթիվ, որ կատարել էր Անդրյերկաթսոցապդրամարկղը, որպեսզի նրանց տեխնիքական աշխատանքները ավելի լավ դրության մեջ դրվի։

Պրոֆեսիոնալ հաշմանդամության և պրոֆեսիոնալ հիվանդության ապահովման մասին որենքները կյանքի մեջ իրագործելու նպատակով, վերաքննվեցին բոլոր պենսիոներների գործերը (ինվալիդների, այրիների և որբերի)։

Միաժամանակ վերաքննվեցին պենսիոներների բոլոր գործերը, որպեսզի ընդհանրապես, որոշվի նրանց թոշակ ստանալու իրավունքները։

Լավացած է կապը Անդրկովկասյան սոցիալական ապահովագրման Գլխավոր Վարչության հետ և Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի Հանրապետությունների սոցիալական ապահովագրման տեղական Վարչությունների հետ, որոնց հետ համաձայնեցնվում և միասին որոշվում են յերկաթուղային և տերրիտորիալ (քաղաքային) դրամարկղների համար ընդհանուր հարցեր, միասին հրատարակվում են տեղական լեզուներով ապահովագրական գրականություն և քննվում են համապատասխան պլենումներում ապահովագրման վերաբերյալ հարցեր, որոնք ընդհանուր—յերկրային նշանակություն ունեն։

Առանձնապես բոլոր կարևոր հարցերը, նույնպես և այն հարցերը, որ-

րոնք վերաբերվում են սոցիալական ապահովագրման ղեկավարմանը տեղերում, Անդրյերկաթուղագրամարկղի Կոմիտեն միշտ կոլեգիալ կերպով է քննել (Կոմիտեյի ժողովներում)։

Հաշվետու տարին Կոմիտեյի ժողովներ յեղել են 72 (ամսական 6 նիստ), վորոնցից մոտ կեսը կատարվել է զանազան հիմնարկությունների և կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ։

Բացի Կոմիտեյի նիստերից, վերջինի անդամները անհատապես, կամ բոլորը միասին, կամ իբրև Կոմիտեյի ներկայացուցիչներ, մասնակցում եյին զանազան հիմնարկությունների և կազմակերպությունների համաձայն նիստերին։

Վորոշ կազմակերպությունների նիստերում, Կոմիտեյի առանձին անդամները յեղել են իբրև մշտական ներկայացուցիչներ։ Այդ կազմակերպությունները սրանք են՝ Անդրկովկասի յերկաթուղիների Առաջին Խորհուրդը, համարյա նրա բոլոր հանձնաժողովները, Անդրկովկասյան Գլխսոցապի (Главсоцстраха) պլենար նիստերը, Ճանապարհային ֆիզկուլտուրայի Բյուրո, Ճանապարհի Բժշկական Եկսպերտիզի Բյուրո, Անդրյերկաթուղագրամարկղին կից կառուցման Կոմիտե, Հանձնաժողով վոսնգի և վնասակարության ուսումնասիրության, Գլխսոցապի (Գլավսոցստրախի) կից Կոնֆլիկտային Հանձնաժողով, վորտեղ քննվում են աշխատանքի ինվալիդների Անդրյերկաթուղագրամարկղի թոշակների հարցերի նշանակման և այլն վճիռների վերաբերյալ անբավականների գանգատները։

Այն կազմակերպությունները, վորոնց նիստերում Անդրյերկաթուղագրամարկղի Կոմիտեյի անդամները կամ նրա ներկայացուցիչները մասնակցում եյին ըստ կարևորության կամ հրավիրման կարգով—հետևյալն են՝ Զակդորպրոֆսոժի Պրեզիդիումը, Զակդորպրոֆսոժի Պլենումը, Անդրկովկասյան Ապահովագրման Խորհրդակցությունները, բժիշկների և սանիտարական բժիշկների համագումարները, տերրիտորիալ պրոֆմիությունները, ապահովագրամարկղները և այլն։

Անդրյերկաթուղագրամարկղի Կոմիտեյի առանձին անդամները, կամ նրա ներկայացուցիչները, մասնակցել են հաշվետու տարվա մեջ 300-ից ավելի նիստեր, վորոնք կայացել են զանազան հիմնարկություններում և կազմակերպություններում։

Դա նշանակում է, վոր տարվա մեջ չի յեղել համարյա վոչ մի որ, վոր Կոմիտեյի անդամը, կամ նրա ներկայացուցիչը, չմասնակցեր վորևե տեղ այս կամ այն կազմակերպության նիստին։

XIII

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԻ ՀԻՎԱՆԴՈՏ ՅԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ

Անդրյերկաթուղագրամարկղը յերկաթուղիների վրա սոցիալական ապահովագրման կիրառման ընթացքում հանդիպում է բազմատեսակ արգելքների, վորոնք խանգարում են սոցիալական ապահովագրման կանոնավոր

զարգացմանը, գործի դրության լավացմանը և նրա աշխատանքների նորմալ ընթացքը։

Հիմնական արգելքը, դա ապահովագրվածների վորոշ մասի անգիտակցությունն է, վոր արտահայտվում է նրանով, վոր անգիտակից աշխատավորները ամեն տեսակի խորամանկություններ են դիմում, վորպեսզի իրենց հիվանդությունով դրամարկղին մի կերպ խաբեն, նպատակ ունենալով այդ գործում մի քիչ «շահվելու»։

Լավ իմանալով, վոր հիվանդության դեպքում իրենց նյութական դրությունը, միևնույն է, չի վատանում, նրանք դիմում են խաբերայության, ձևացնելով իրենց հիվանդ, աշխատանքի վոչընդունակ (симулируют болезнь —ձևացնում են իրենց իբրև հիվանդ), կամ թե հիվանդաթերթի վրա նշանակած արձակուրդը վերջանալուց հետո, նորից չուզենալով աշխատանքի անցնել, ձևացնում են իրենց չառողջացած։

Դրանք—այսպես կոչված սիմուլյանտներն են։

Սիմուլյացիայի դեմ կռվելու համար Ապահովման դրամարկղը ունի բժշկական վերաստուգիչ հանձնաժողով և հատուկ ստուգում, վորը Դրամարկղը իկատար է ածում յուր հավատարմատար բժիշկների միջոցով, վորոնց թիվը գծի վրա հասնում է 4-ի (մեկը Հայաստանում, մյուսը Ադրբեջանում և յերկուսը Վրաստանում)։

Ստուգման կազմակերպությունը, պարզ է, կապված է ծախսերի հետ, բայց այդ ծախսը արդարացվում է այն ոգուտով, վոր նա բերում է, վորովհետև ուղղված է ապահովագրական միջոցների հափշտակությունների դեմ, վոր թույլ է տալիս ապահովագրված անգիտակից մասը։

Յերկաթուղիների ապահովագրման գործի մի այլ չարիքը կազմում են այն փորձերը, վորոնք վտանգում են ապահովագրական միջոցների հաջողությունը և վորոնք, անշուշտ, պատժվում են քրեական կարգով։

Դա բժիշկների և ադմինիստրացիայի հիվանդաթերթերի վրա ստորագրությունների կեղծելն է (ինքնազատումն աշխատանքից) և Ապահովման դրամարկղը ներկայացնվում է ընդհանրապես կեղծ «հիվանդաթերթեր», կամ «բժշկական ստուգիչ հանձնաժողովի վկայականներ»—ապորինի կերպով փողեր ստանալու նպատակով։

Այդ անձանց դեմ Անդրյերկաթուղագրամարկղը անցյալ տարի կռիվ է մղել, հանձնելով չարագործներին համապատասխան իշխանության մարմիններին, կազմակերպելով հասարակական-կրթական դատաստաններ, յերկաթուղային բնակչության մեջ տարածելով պրոպագանդա սոցիալական ապահովագրման հիմքերի մասին և կազմակերպելով բեմական դասեր «հիվանդական թերթեր» կեղծողների վերաբերմամբ։

Ապահովման դրամարկղի կյանքում յերրորդ չարիքը ներկայանում է այսպես կոչված «гастролерство» (հյուրախաղությունը)։ Գաստրոլյորները մի տեղից մյուս տեղն են չվում, ներկայանալով այս կամ այն ապահովման դրամարկղը։

Դա—կեղծ ինվալիդներ և զանազան բյուլլետենսչիկներն են։ Դրանց

շատերի ազգանունները նշանակված և հայտարված են «Вопросы Страхования» ժուրնալում, վորտեղ նկարագրված են դրանց հյուրախաղական քաջագործությունները։

Հաճախ այդ անձնավորությունները հիվանդ են ձևացնում իրենց, հոգեկան հիվանդ, ուշագնաց յեղողներ, կամ թե, յերբ դրամարկղը մերժում է այս կամ այն ձևի նպաստի վճարումից, դրանք սկսում են կատաղի աղմուկ և շփոթ հարուցանել։ Սովորաբար այդ գաստրոլյորները իրենց գործողությունները արդարացնում են մի շարք համապատասխան վկայականներով, վորտեղ ցույց է տրված, վոր տվյալ ընկերոջ չի կարելի գրգռել, վորովհետև նա իր գործողությունների մեջ պատասխանատու չի կարող լինել, կարող է ծեծել այն անձնավորության, վորը կը համարձակվի նրան հակաճառել, կամ թե գժության ժամանակ կարող է «ինքնասպանություն» գործել։

Նման գաստրոլյորներ յեղել են Անդրյերկաթսոցապդրամարկղում և Շրջդրամարկղներում, բայց վորովհետև ապահովագրման դրամարկղներում գոյություն ունեն փող տալու դեպքերում խիստ կանոններ, այդ պատճառով նման անձնավորություններին չի հաջողվել ոգտագործել ապահովագրական միջոցները։

Իբրև գաստրոլյորի որինակ կարող է ծառայել մի վոմն «Կաժբերով», վորը Անդրյերկաթսոցապդրամարկղը ներկայացրել է վկայական, վոր իբր թե նա Սանդաչալ կայարանի վագոնների զննողն է և նույն կայարանի պրոֆիլիազորը։

Իրականապես «Կաժբերովը» յերևաց, վոր անհայտ անձնավորություն է տիպիքական գաստրոլյոր։

Գաստրոլյորության վերջ դնելու համար բոլոր կազմակերպություններին կարելի յե միայն մի միջոց առաջարկել՝ զանազան վկայականներ տալու դեպքերում լինել զգույշ, քիչ ծանոթ անձանց նկատմամբ, մանավանդ չհենվել այդպիսիների լոկ հայտարարությունների վրա, փաստերը առանց ստուգելու։

Ապահովագրման գործի մեջ չորրորդ չարիքը դա ադմինիստրացիայի և մասամբ բժիշկների անփույթ վերաբերմունքն է, հիվանդաթերթերը համապատասխան ծանուցումներով լրացնելու դեպքերում։

Շատ բժիշկներ սխալ և անփույթ կերպով են լրացնում հիվանդաթերթերը և բժշկական հանձնաժողովների վկայականները, իսկ ադմինիստրացիան, շատ հաճախ, աշխատավարձի մասին տալիս է սխալ տեղեկություններ։

Նման վերաբերմունքը դեպի այդ դոկումենտները առաջացնում է գործի ձգձգում և ապահովագրվածների կողմից սնտեղի մեղադրանքներ ապահովագրման դրամարկղների հասցեին։ Վերջինների կարծիքով, ապահովման դրամարկղը փող տալու դեպքերում ավելորդ «ձևականություններ» և թույլ տալիս, յեթե, նույնիսկ, թերթը սխալ է լրացրված։

Այն ինչ, յերբ կան ապահովագրվածների մեջ այնպիսիները, վորոնք հանդիսատ սրտով ապահովման դրամարկղը ընդունակ են խաբել ու նրա միջոցներից ոգտվել, այդ դեպքում դրամարկղների «ձևականությունը», իհարկե,

ավելորդ չե։ Դրամարկղները շնորհիվ իրենց «ձևականության», բռնել են միքանի տասնյակ ժողովրդական փողեր գողացողներին։

Այս հասկանալը անհրաժեշտ է, մանավանդ, ձեռնարկությունների և հիմնարկությունների ադմինիստրացիաներին և պետք է նրանք ուշադրություն ցուցադրեն հիվանդաթերթերը լրացնելու գործում, իրենց գրասենյակներում այդ գործը պատասխանատու անձանց հանձնարարելով։

Հինգերորդ չարիքը, դա ապահովագրման որգաններում ապահովագրական միջոցների վատնումն է, վորը Անդրյերկաթգծի տրանսպորտի դրամարկղներում ընդհանրապես չի նկատվում, բացառությամբ մեկ դեպքի, վոր տեղի ունեցավ այս յերեքից ավելի տարվա ընթացքում։

Թիֆլիսի Շրջդրամարկղի գանձապահ Գուլիսաշվիլին 15-ն հունվարի 1925 թ. յուրայրեց 1696 ռ. 87 կ.։ Գործը հանձնվեց դատարանին, վորը բավարարեց Անդրյերկաթսոցապդրամարկղի քաղաքացիական պահանջը և վերջինին տավ գործադրական թերթ։ Բայց փողերը դեռ չի հաջողվել ստանալ, վորովհետև Գուլիսաշվիլին անհետացել է և հետախուզությունները դեռ վոչ մի հետևանքի չհասցրին։

Բոլոր մեր գծերի ապահովագրման գործի մեջ թված բացասական կողմերը ներկայացնում են այն հիմնական չարիքը, վորի դեմ Անդրյերկաթսոցապդրամարկղը կռվել է անցյալ տնտեսական տարվա ամբողջ ընթացքում։

Առաջի յերեք հիվանդությունների դեմ կռվի մեջ Անդրյերկաթսոցապդրամարկղը ունեցել է նշանավոր հաջողություն, իսկ չորրորդ հիվանդության դեմ կռիվը, բացարձակապես վոչ մի հետևանքի չհասցրեց։

Ձեռնարկությունների և հիմնարկությունների ադմինիստրացիան մնում է խուլ դեպի ապահովագրման դրամարկղի պահանջները, կամ նա չի հասկանում ապահովագրման գործի շահերը, կամ թե չի ցանկանում մեզ մոտ վերջինի կանոնավոր զարգացմանը նպաստել։

Բացի ապահովագրման գործի հիվանդությունների դեմ թված կռվելու միջոցներից, Անդրյերկաթսոցապդրամարկղը վերջի ժամանակ սկսել է յերկաթուղայինների մեջ ուժեղացնել ապահովագրման լուսավորությունը, յենթադրելով, վոր յեթե նրանք լավ ծանոթանան սոցիալական ապահովագրման խնդիրների, նրա նպատակների և իրենց պարտականությունների հետ և ցույց տալ ու բացատրել, վոր զգույշ պետք է վարվել դրամարկղի միջոցների հետ, վորովհետև դրանք սեփականություն են կազմում բոլոր ապահովագրվածների, այն ժամանակ կհաջողվի վերացնել ապահովագրման գործի մեջ բոլոր այլանդակությունները։

XIV

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ապահովագրական որենքների և կանոնների հետ անծանոթ լինելը նկատվում է վոչ թե միայն ապահովագրված բանվորական բնակչության լայն մասսաների մեջ, այլև նույնիսկ պրոֆեսիոնալ և բժշկական աշխատակից-

ների մեջ, վորոնք ավելի մոտ են կանգնած ապահովագրման գործին, քան շարքային ապահովագրվածը։

Այս հասգամանքը հրամայողաբար պահանջում է Անդրյերկաթսոցապ-դրամարկղից յուր մասնակցողների ապահովագրական լուսավորության վրա առանձին ուշադրություն դարձնել։

Յեթե շարքային ապահովագրվածները ծանոթ չլինեն սոցապահովագրման հիմքերի, խնդիրների և նպատակների հետ, անկարելի յե պահանջել վերջիններից գիտակցական վերաբերմունք դեպի յուր ապահովման դրամարկղը։

Անդրյերկաթսոցապդրամարկղը յուր մասնակցողների ապահովագրական լուսավորությունը սկսել է տանել իր գոյության առաջի ամսից և ձևերն ու միջոցները քիչ են տարբերվում այն ձևերից, վորոնք գործադրվում եյին պրոֆմիության կողմից կուլտկրթական աշխատանքների ասպարեզում։

Մասսայի լուսավորության միջոցները զանազանակերպ են։

Սկզբում անդրյերկաթսոցապդրամարկղը սոցիալական ապահովագրման հարցի մասին մատչելի հոդվածներ եր տեղավորում տեղական թերթերում, տեղական լեզուներով դուրս եր թողնում պլակատներ, վորտեղ բացատրված եյին թոշակների և նպաստների ստանալու կանոնները և լուսաբանում եր յուր գործունեությունը թե մամուլի միջոցով և թե համագումարներում, կոնֆերենցիաներում և բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովներում բանավոր զեկուցման միջոցներով։

Անցյալ տնտեսական տարին, ապահովագրական լուսավորության բացի այդ միջոցներից, գործադրվում եր և նոր միջոցներ ու աշխատանքն ել ուժեղացրված եր։

Առանձին ուշադրություն եր դարձնվում բոլոր տեղերին ապահովագրական գրականության հայթայթմանը, վոր հրատարակվում եր թե կենտրոնում և թե Անդրկովկասում (Շրջդրամարկղները, շրջանի միությունները, տեղկոմները, բուժհիմնարկությունները և բանվորական ակումբները)։

Պարբերաբար կազմվում եր տեղկոմների և ադմինիստրացիայի ներկայացուցիչներից խորհրդակցություններ սոցիալական ապահովագրման զանազան հարցերի գործնական քննության համար։

Այս խորհրդակցությունների ժամանակ տեղկոմները և ադմինիստրացիան ծանոթանում եյին ապահովագրման դրամարկղի կարիքների հետ։

1924 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1925 թ. հոկտեմբերի 1-ը Անդրկովկասյան յերկաթգծի վրա նաև, հանգստի տներում և Ցեմի սանատորիայում տարված է սոցիալական ապահովագրման զանազան հարցերի վերաբերյալ մոտ 20 դասախոսություններ, միքանի հարցեր պրոֆիլակտիկայի (նախազգուշացում հիվանդությունների) վերաբերմամբ և միքանի «հարցերի և պատասխանների» յերեկոներ։

Բացի այդ, գծի շատ մասերում և կենտրոնական կայարաններում, դրվել են ցուցադրական դատեր և բեմագրական-դատեր հիվանդաթերթերի չարաշահության վերաբերյալ նյութերից։

Մի այդպիսի բեմագրական դատ հրատարակել է Անդրյերկաթսոցապդրամարկղը ռուսերեն և տեղային լեզուներով—բանվոր Թեոփանովի դատը, վորը կեղծ վկայականով նպաստ է ստացել ապահովագրամարկղից։

Թե վորքան հետաքրքրություն է առաջ բերում բանվորության մեջ ցուցադրական դատերը, վկայում են տեղերից ստացված տեղեկությունները, վորոնք ցույց են տալիս, վոր ակումբները լցված են լինում բանվորներով և նույնիսկ, տեղ չլինելու պատճառով, նրանք կուտակվում են դռների մոտ և անցքերի մեջ։

Ապահովագրման պրոպագանդան ուժեղացնելու համար, ամառային արձակուրդների ժամանակ ոգտագործվել են Մոսկվայի սոցիալական ապահովագրման ուսումնարանի ուսանողները (Անդրյերկաթսոցապդրամարկղի թոշակավորները)—Հասան Ջաֆարովը (Ադրբեջանի գծի վրա) և Այվազյանը (հայկական)։

Յերկուսն ել տեղական լեզուներով մի շարք զեկուցումներ են արել սոցիալական ապահովագրման նշանակության մասին և ժողովներում պարզաբանել են սոցիալական ապահովագրման վերաբերյալ մի շարք հարցեր։

Ապահովագրված մասսայի հետ կապը խորացնելու նպատակով, Անդրյերկաթսոցապդրամարկղը բոլոր յերկաթուղիների վրա մտցրել է, այսպես կոչված, ապահովագրական պատգամավորներ (դելեգատներ), վորոնք ընտրվում են իրենց ապահովագրվածների միջից։

Նրանք պետք է անցկացնեն մասսայի մեջ սոցիալական ապահովման գլխավոր հիմքերը և կապ պաշտպանեն ապահովագրված մասսայի ու ապահովագրամարկղների միջև։

Ապահովագրման դելեգատների հետ միասին, ապահովագրական լուսավորությունը ուժեղացնելու համար, ապահովագրամարկղը ոգտագործում է հավատարմատար բժիշկներին, վորոնց պարտավորեցնում է սոցիալական ապահովագրման հարցերի վերաբերյալ կարդալ դասախոսություններ, բժշկապահովագրական ստուգումներ կատարել, հետևել բժշկական ոգնության գործին, կազմակերպել ապահովագրվածների համար զրույցներ, տալ բացատրություններ ապահովագրման գործի վերաբերյալ և, ընդհանրապես, զարկ տալ տեղերում ապահովագրական լուսավորությանը։

Բայց մասսայի ապահովագրման լուսավորության գործի մեջ միայն ապահովագրման աշխատակիցների ջանքերը բավական չեն։

Գործի հաջողությունը շատ բաներում կախված է և պրոֆեսիոնալ կազմակերպությունների ուշադիր վերաբերմունքից, վորոնց ակտիվ ոգնությունը այդ գործի մեջ հանձինս իրենց կուլտ-աշխատակիցների, շատ մեծ դեր է խաղում։

Ապահովագրման լուսավորության գործը, ընդհանուր պրոֆմիության կուլտ-աշխատանքի հետ կապելու համար, Անդրյերկաթսոցապդրամարկղը հաշվետու տարվա վերջին յուր ապահովագրական լուսավորության աշխատանքի ծրագիրը համաձայնեցրել է ճանապարհային կուլտ-աշխատակիցների խորհրդակցության ծրագրի հետ 1926 թվի համար։

Այդ ծրագրով ապահովագրական լուսավորությունը տեղերում կատարվում է ուշկպրոֆսոժների, տեզկոմների և համապատասխան ուղեմաս դրամարկղների մասնակցությամբ, կենտրոնի ընդհանուր ղեկավարությամբ։

XV

ԱՆԴՐՅԵՐԿԱԹՍՈՑԱՊԴՐԱՄԱՐԿՂԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՀԽՃՄ ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆՆԵՐԻ ՊՐՈՖՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Անդրյերկաթսոցապդրամարկղը և Շրջդրամարկղները յերկաթուղային Միության որգանների հետ շատ սերտ հարաբերության մեջ են գտնվում, իբրև վերջինի հետ մի ծագում ունեցող կազմակերպություններ։

Միությունը դելեգատների համագումարներում կազմում է ապահովագրման դրամարկղների կոմիտեները և ինքն էլ գաղափարականորեն ղեկավարում։

Շատ հաճախ ապահովագրման դրամարկղների կոմիտեները և միութենական որգանների պրեզիդիումները ունենում են նույնիսկ ընդհանուր ընտրված աշխատակիցներ, վոր էլ ավելի սերտ է կապում այդ յերկու մոտիկ կազմակերպությունները։

Առանձնապես վորոշ կարևոր և սոցիալական ապահովագրման սկզբունքային հարցերը, վորոնք նշանակություն ունեն ամբողջ ապահովագրված յերկաթուղային բնակչության համար, Անդրյերկաթսոցապդրամարկղը և Զակդորպրոֆսոժը միշտ քննում են միասին։

Նույնը կատարվում է և ուղեմասերում ուշկպրոֆսոժների և ուղեմասդրամարկղների հետ։ Անդրյերկաթսոցապդրամարկղի համար բոլոր անհրաժեշտ դեպքերում, յերկաթուղային պրոֆկազմակերպությունները, սովորաբար, նրան ոգնում և համապատասխան աջակցություն են ցույց տալիս։

Անդրյերկաթսոցապդրամարկղի և ուղեմասդրամարկղների փոխհարաբերությունները յերկաթուղային պրոֆմիության որգանների հետ առավելապես ամրացել են անցյալ տնտեսական տարվա ընթացքում, վորը արտահայտվեց թե Անդրկովկասյան յերկաթուղիների սոցիալական ապահովագրման գործի զարգացման մեջ և թե ամբողջ յերկաթգծերի բանվորության շարքերում պրոֆմիության հեղինակության ամրացման իմդրում։

XVI

ԲԺՇԿԱ-ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԲԺՇԿԱ-ԵՔՍՊԵՐՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ապահովագրման դրամարկղների մասնակցությունը բժշկա վերահսկիչ հանձնաժողովներում։

Անդրկովկասյան յերկաթուղիների վրա սահմանված են բժշկա-վերահսկիչ հանձնաժողովներ բժշկական բարդ հարցերի լուծման համար՝ ապահովագրվածներին աշխատանքներից ազատելու, արձակուրդներ նշանակելու և այլ հարցեր, վորոնք կապված են թե ժամանակավոր աշխատանքի ընդունակության կորուստի և թե այն միջոցների հետ, վորոնք պիտի նպաստեն աշխատանքի ընդունակության վերականգնելուն։

Անդրկովկասյան յերկաթուղիների վրա խոշոր յերկաթուղային կայաններում կազմակերպված են հանձնաժողովներ, իսկ կենտրոնում, Թիֆլիսում, բացի Թիֆլիսի յերկաթուղային հիվանդանոցին կից հանձնաժողովից, գոյություն ունի դարձյալ մեկ՝ Գլխավոր Ճանապարհային Հանձնաժողով։

Այդ հանձնաժողովներում նախագահ է կամ Միության ներկայացուցիչը կամ ապահովագրման դրամարկղի նախագահը։

Հանձնաժողովների այդ նիստերին մասնակցում են նույնպես և տեղերում գտնվող հավատարմատար բժիշկները։ Ընդհանուր ղեկավարությունը և ուղեմասային բժշկական վերահսկիչ հանձնաժողովների գործունեության ստուգումն իրականացվում է Գլխավոր Բժշկական Վերահսկիչ Հանձնաժողովի կողմից, վորտեղ նախագահում է Ճանապարհի ապահովագրման դրամարկղի անդամներից մեկը, հավատարմատար բժշկի մասնակցությամբ։

Բացի դրանից, Գլխավոր Բժշկական Վերահսկիչ Հանձնաժողովը ուղեմասային բժշկական հանձնաժողովների վորոշումներով անրավական մնացած ապահովագրվածների գանգատներն է քննության առնում։

Գլխավոր յեվ ուղեմասային Բժշկական-Վերահսկիչ Հանձնաժողովների գործունեությունը սառաջի 6 ամսվա ընթացքում 1925 թ.։ Բժշկական Եքսպերտային Բյուրո։

Անդրկովկասյան յերկաթուղիների վրա ուղեմասային բժշկական-վերահսկիչ հանձնաժողովների թիվը հավասար է 13-ի։ Այդ հանձնաժողովների նիստերի ընդհանուր թիվը հունվարի 1-ից 1925 թ. մինչև հուլիսի 1-ը 1925 թ. հավասար եր 361-ի։ Այդ նիստերում քննված են 6494 գործեր։

Արձակուրդ տրված է 3232 անձանց ընդամենը 52843 որ։ Միևնույն ժամանակամիջոցում Ճանապարհի Բժշկական-Վերահսկիչ Հանձնաժողովը ունեցել է 36 նիստ, քննել է 119 գործ, արձակուրդ է տվել 58 անձանց ընդամենը 1070 որ։

Բժշկական Եքսպերտային Բյուրոն (բժշկական եքսպերտային հանձնաժողով) սահմանված է (կենտրոնացած) Անդրյերկաթսոցապդրամարկղին կից նրա գոյության հենց սկզբից։

Բժշկական եքսպերտային Բյուրոն գլխավոր այն նշանակությունը ունի, վոր վորոշում է ապահովագրվածների անկյալությունը (ինվալիդություն) և վերջինի խմբերը։ Բացի այդ, նա տալիս է յուր վորոշումը աշխատունակության վերականգնելու կամ չվերականգնելու հնարավորության մասին և վորոշում է պրոտեզի անհրաժեշտության մասին։

Եքսպերտային հանձնաժողովի կազմի մեջ մտնում են մասնագետ բժիշկներ։ Անհրաժեշտ դեպքերում բժշկական եքսպերտային հանձնաժողովը ուրիշ բժշկական զանազան ասպարեզների մասնագետների և բուժհիմնարկությունների ծառայությամբ էլ է ոգտվում։

1924 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1925 թ. հոկտեմբերի 1-ը բժշկական մասնագետների բյուրոն ընդամենը վերաքննության է յենթարկել 281 ապահովագրվածների և 331 մարդ ընտանիքի անդամների։ Բոլոր ապահովագրվածներից 29 մարդ գտնվեցան առողջ, 44 մարդ 1-ին խմբի անկյալ (ինվալիդ), 129 մարդ 2-րդ խմբի անկյալ (ինվալիդ) և 79 մարդ 3-րդ խմբի։ Ինչ

վերաբերվում է քննության յենթարկված ընտանիքի անդամներին, նրանցից վորոշվեց աշխատունակներ 72 մարդ և անաշխատունակներ 259 մարդ։

XVII

ԱՆԴՐՅԵՐԿԱԹՍՈՑԱՊԴՐԱՄԱՐԿՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՎՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Անդրկովկասյան յերկաթուղային տրանսպորտի վրա աշխատանքի յերկյուղալի և վնասակարության պայմանների դեմ կռվի մեջ մասնակցում են հետևյալ կազմակերպությունները՝ 1. Ճանապարհի Աշխատանքի Տեսչությունը (ինսպեկցիան), վորը կյանքի մեջ է մտցնում աշխատանքի պաշտպանման և առողջացման նախազգուշացման միջոցներ, 2. Զակդորպրոֆսոժին կից կազմակերպված հատուկ հանձնաժողովը, վորի նպատակն է զբաղվել առանձնապես արդյունաբերության մեջ վնասակար աշխատանքի պայմանների ուսումնասիրությամբ և 3. Անդրյերկաթսոցապդրամարկղը։

Անդրյերկաթսոցապդրամարկղը, բոլորից շատ շահագրգռված լինելով նվազեցնել աշխատանքի պրոֆեսիոնալ վնասակարությունները, ամենաակտիվ մասնակցությունն է ցույց տալիս բոլոր թված կազմակերպություններում իր ներկայացուցիչների միջոցով, վորպեսզի Անդրկովկասյան յերկաթուղիների վրա աշխատանքի պայմանները առողջացնել ու այդ նպատակի համար նյութական պաշտպանություն է ցույց տալիս։

Անդրյերկաթսոցապդրամարկղը աշխատում է այդ հարցին այնուամենայնիվ գործնական բնույթ տալ և պահանջում է շահագրգռված կազմակերպություններից, բանվորի առողջության վրա տվյալ արդյունաբերության ազդեցությունը առավելապես ուսումնասիրել պրոֆիլակտիկայի (նախազգուշացման կերպով) տեսակետից, այլ վոչ բացառապես բուժման։

Աշխատանքի յերկյուղալի և վնասակարության դեմ կռվելու գործում, բացի վերոհիշյալ մասնակցությունից, Անդրյերկաթսոցապդրամարկղի գործնական քայլերը նաև հետևյալումն են կայանում՝ 1) մշակված են մի շարք գործնական միջոցներ աշխատանքի վնասակար և ծանր պայմանների դեմ կռվելու համար և վորոնք մտցրված են Անդրյերկաթսոցապդրամարկղի 1925/1926 թ. աշխատանքների ծրագրի մեջ, 2) կատարվում է արդյունաբերական տրավմատիզմի (հաշմանդամության) վիճակագրական նյութի հատուկ մշակումը։

Անդրյերկաթսոցապդրամարկղը, ձեռք բերված վիճակագրական տվյալների ուսումնասիրության հիման վրա Անդրկովկասյան յերկաթուղայինների աշխատանքի պայմանների մասին, հասավ չափազանց անմխիթար յեզրակացությունների և պարզվեց, վոր հաշմանդամության տոկոսը համեմատաբար մյուս հիվանդությունների հետ, բոլոր ժամանակը աստիճանաբար ավելանալով, 1925 թ հասել և մինչև 14%-ի (1924 թ. 10-ից չեր ավելանում)։

Գործի այդ դրությունը հրամայողաբար պահանջում է ապահովման դրամարկղից Անդրկովկասյան յերկաթուղային տրանսպորտի աշխատանքի յերկյուղալի և վնասակար պայմանների դեմ կռվի ուժեղացման նախաձեռնությունը վերցնել յուր վրա։

Հիվանդության և աճող դժբաղդ դեպքերի (տրավմատիզմի) դեմ կռվի բոլոր յուր կոնկրետ միջոցները անցկացնելու համար, Անդրյերկաթսոցապդրամարկղը հանձինս տեխնիկական և ռանիտարական տեսչի, կը գտնի անպայման լրիվ աջակցություն, վորովհետև ապահովագրման դրամարկղի հանձնարարությունների հիման վրա տեսչության այդ աշխատանքը նախատեսված է Անդրկովկասի Աշխատանքի ժողկոմի կողմից վորոշ վճիռով։

XVIII

ԱՆԴՐՅԵՐԿԱԹՍՈՑԱՊԴՐԱՄԱՐԿՂԻ ՇԻՆԱՐԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Վորովհետև թե Դիդի-Ցեմիում գոյություն ունեցող հանգստատան միանգամայն անբավական լինելը, նույնպես և զանազան կազմակերպությունների մոտ՝ սանատորական առանձին մահճակալներ վարձելու անբավական լինելը չեյին կարող ապահովագրված յերկաթուղայինների կարիքները սանատորական բժշկությամբ լիովին բավարարվել, ուստի Անդրյերկաթսոցապդրամարկղը 1924 թ. հունվարից արդեն սանատորիումի նոր շենքի կառուցման քայլեր է սկսել։

Կազմված եր շինության նախահաշիվ և Վրաստանի բոլոր կուրորտային տեղերի գիտական մի շարք հետազոտություններից հետո, տեղ ընտրվեց սանատորիումի շինության համար Լիբանում, Բորժոմ-Բակուրիանիի շրջանում Դիդի և Պատարա Ցեմիի մեջը։ Այդ տեղը գտնվում է 640 սաժեն ծովի մակերևույթից բարձր, կոնաբերների անտառում։ Այստեղ սանատորիումի համար հատկացրված է մոտ 50 դեսյատին։

Ապա, մի տարի նախապատրաստական աշխատանքներից հետո, 1924 թ. հունիս ամսից սկսված է սանատորիումի շինքի կառուցումը։

Սկզբում շինության կառուցումը հանձնված եր «Ստանդարդ» ակցիոներական ընկերության, բայց հետո սնանկության պատճառով նա շինությունից հեռացվեց։ Դրանից հետո շինության գործը շարունակելու համար կազմակերպվեց Անդրյերկաթսոցապդրամարկղին կից Շինության Կոմիտե, բաղկացած յերեք ներկայացուցիչներից—մեկը Անդրյերկաթսոցապդրամարկղից, վոր ներկայանում է Շինության Կոմիտեյի նախագահը, մյուսը՝ Անդրկոմից և յերրորդը՝ Անդրյերկաթարհմիությունից։

Առաջինից և յերրորդը՝ Անդրյերկաթարհմիությունից։

Հաշվետու տարին Շինության Կոմիտեն ունեցել է 35 նիստ, իսկ յեթե հաշվել մինչև 1926 թ. հունվարը, այն ժամանակ 50 նիստ։ Շինության Կոմիտեյի ղեկավարությամբ սանատորիումի կառուցման գործը, վոր տարվում է տնտեսական միջոցով, սկսեց շատ շուտ առաջ ընթանալ։ Սանատորիումի շինությունը պատրաստվում է թոքային հիվանդների (120 մարդու) համար,

գիտական բոլոր պատրաստություններով և հարմարություններով։ Շինությունը յենթադրվում է վերջացնել 1926 թ. աշնանը։ Սանատորիան պիտի գործի ամբողջ տարին։

Բացի Լիբանի սանատորիումից, Անդրյերկաթսոցապդրամարկղը նախապատրաստական աշխատանքներ է տանում Վրաստանում սեփական հանգստի տուն շինել, վորպեսզի լիովին բավարարություն տա Վրաստանի յերկաթգծի աշխատավորների կարիքներին, վորովհետև Վրաստանի Պրոֆմիության Խորհրդի հանգստի տներում վարձով վերցված տեղերը չեն կարող բավարարել ամառային հանգստության համար Հանրապետության յերկաթուղայիններին։

XIX

ԱՆԴՐՅԵՐԿԱԹՍՈՑԱՊԴՐԱՄԱՐԿՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Անդրյերկաթսոցապդրամարկղը և շրջանային ապահովման դրամարկղները տեղերում չափազանց մեծ ույժ և աշխատանք են արդեն ծախսել Անդրկովկասի յերկաթուղիների սոցիալական ապահովման գործի բազմակողմանի բարելավման և զարգացման համար։

Բայց հեռանկարում, շնորհիվ ապահովագրման գործի զարգացման, դեռ չափազանց մեծ աշխատանք և սպասվում կատարելու։

Ինչպես յերևում է սույն հաշվետվությունից, Անդրյերկաթսոցապդրամարկղը ապագայում առանձին ուշադրություն պիտի դարձնի ապահովագրական վճարները լրիվ և ժամանակին ստանալու մասին, վորից կախված է ապահովագրման դրամարկղի ֆինանսական հիմքի ամրությունը և ապահովագրվածների հետագա ապահովման զարգացումը, վորը մանավանդ կարևոր է այժմ, յերբ սպասվում է անգործների շրջանի հետագա լայնացումը, նրանց ընտանիքավորներին նպաստների առանձին հավելացումը, ինվալիդների համար թոշակների չափի վորոշման նոր սկզբունքը (համաձայն աշխատավարձի բարձրացման) և Անդրյերկաթսոցապդրամարկղի ծախսերի շատացումը ժամանակավոր աշխատանքի ընդունակության կորուստի, սանատորիական կուրորտային ոգնության և հանգստի տների համար։

Անդրյերկաթսոցապդրամարկղի ապագա աշխատանքի այլ կարևոր մոմենտը ապահովագրական ծախսերի տնտեսման մեջ պիտի լինի՝

ա) սիմուլյացիայի (կեղծ հիվանդության) և «հիվանդությունները» ի չարը գործադրման դեմ կռվի ուժեղացում.

բ) աշխատանքի անընդունակների վրա հսկողության ուժեղացում.

գ) Անդրկովկասի յերկաթուղային Սոբաժնի հետ, ժամանակավոր աշխատանքի ընդունակությունը կորցնողների արձակուրդի տրման հարցերի կանոնավորում.

դ) Անդրկովկասի յերկաթուղիներում յերկյուղալի և վնասակար աշխատանքների դեմ պլանային կռվի կազմակերպումն և

յե) կազմակերպչական ծախսերի քչացում։

Յերրորդ, առաջնակարգ նշանակություն ունեցող հարցը կայանում է նրանում, վորպեսզի նպատակահարմար կերպով ոգտագործվի բժշկական ոգնության ֆոնդի այն միջոցները, վորոնք Անդրյերկաթսոցապդրամարկղը բաց է թողնում տրանսպորտի բժշկական ոգնության գործի դրությունը բարելավելու նպատակով։

Վորպեսզի ապահովագրվածների ոգնության համար բժշկական գործի կազմակերպության մեջ ունենալ վճռական նշանակություն, Անդյերկաթսոցապդրամարկղին մնում է նախապես համաձայնություն ստանալ Առժողկոմի և Աշխժողկոմի համապատասխան որգանների միջոցով, այդ հարցի մեջ կանոնավորելու Անդրյերկաթսոցապդրամարկղի և Անդրյերկաթառբաժնի հարաբերությունները։

Բացի այդ Անդրյերկաթսոցապդրամարկղը պետք է՝

ա) կանոնավորի ապահովագրողների հաշվառման գործի դրությունը.

բ) յուր տեխնիքական ապպարատի բարելավման ուղղությամբ տարած աշխատանքը հետագայում ուժեղացնի.

գ) վերաստուգիչ հանձնաժողովների աշխատանքները պիտի ձդտի բարելավել, մանավանդ տեղերում և

դ) ապահովագրվածների անգրագիտության դեմ կռիվը ուժեղացնի, ապահովագրման լուսավորության միջոցով։

Այս հարցերով, պարզ է, Անդրյերկաթսոցապդրամարկղի ապագա աշխատանքը չի սպառվում, դեռ մանր, յերկրորդական հարցեր շատ կան՝ կազմակերպչական, ֆինանսական և գործողության բնույթ կրող։

Անդրյերկաթսոցապդրամարկղի աշխատանքի մեջ թված մոմենտները վերաբերվում են միմիայն նրա գործունեության ամենագլխավոր կողմերին, այդ գլխավոր կետերը չկատարելու դեպքում դժվար կը լինի յերկաթուղային տրանսպորտի վրա սոցիալական ապահովագրման հետագա ամրացումը և զարգացումը։

Անդրյերկաթսոցապդրամարկղի Կոմիտեյի նախագահ՝ Դիկ

Կոմիտեյի անդամներ { Սուրենյան
Սարդլիշվիլի

2013.
<< Ազգային գրադարան >>
NL0051320
170961